Հավասարում 1: Կանխորոշված փոփոխականների քանակ չմտնող հավասարման մեջ՝ 0, մոդելի էնդոգեն փոփոխականների թիվ՝ հանսած 1 կազմում է 0: Ստացվում է՝ տվյալ հավասարումը ճշգրիտ իդենտիֆիկացվող է՝ ըստ անհրաժեշտ պայմանի: Հավասարման մեջ չմտնող փոփոխականների գործակիցներով մատրիցի ունագը -1 է, հավասար չէ 0-ի, հետևաբար հավասարում 1-ը ճշգրիտ իդենտիֆիկացվող է:

²⁹ Տե՛ս **Cobb C.W., Dauglas P.H.**, Theory of Production // American Economic Review, Supplement, March, 1928, էջ 139-165:

Հավասարում 2: Կանխորոշված փոփոխականների քանակ չմտնող հավասարման մեջ՝ 2, մոդելի էնդոգեն փոփոխականների թիվ՝ հանած 1 կազմում է 1: Ստացվում է, տվյալ հավասարումը գերիդենտիֆիկացվող է՝ ըստ անհրաժեշտ պայմանի: Հավասարման մեջ չմտնող փոփոխականների գործակիցներով մատրիցի ունգը 1 է, հավասար չէ 0-ի, հետևաբար հավասարում 2-ը գերիդենտիֆիկացվող է:

Համակարգը գնահատվել է R-ով եռաքայլ ՓԲԵ-ի պլգորիթով: Մոդելի գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 1.8-ում: Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ մոդելների մոտարկումը առանձին-առանձին և ըստ ընդհանուր համակարգի բարձր է, քանի որ հավասարում 1-ի դետերմինացիայի գործակիցը 0.97 է, հավասարում 2-ինը՝ 0.95, իսկ ընդհանուր համակարգինը՝ 0.96:

Մոդելի եռաքայլ ՓԲԵ-ով գնահատման արդյունքները | *Աղյուսակ 1.8*

<i>Systemfit results</i>	
<i>Method: 3SLS</i>	
N DF detRCov OLS-R2 McElroy-R2	
system	42 37 4.99585e+34 0.966477 0.944176
N DF R2 Adj R2	
gdpeq	21 18 0.970964 0.967738
turneq	21 19 0.950805 0.948215
The covariance matrix of the residuals used for estimation	
gdpeq turneq	
gdpeq	4.5689e+17 2.10050e+17
turneq	2.1005e+17 2.27677e+17
The covariance matrix of the residuals	
gdpeq turneq	
gdpeq	4.95378e+17 2.50655e+17
turneq	2.50655e+17 2.27677e+17
The correlations of the residuals	
gdpeq turneq	
gdpeq	1.000000 0.746359
turneq	0.746359 1.000000
3SLS estimates for 'gdpeq' (equation 1)	
Model Formula: gdpts ~ capitalts + wagets	
Instruments: ~capitalts + wagets	
Estimate Std. Error t value Pr(> t)	
(Intercept)	518,946,878 3.47037e+08 1.49536 0.15215
capitalts	0.65 1.10745e-01 5.86566 1.4856e-05 ***

wagets 26,582,473 1.32945e+06 19.99515 9.6811e-14 ***
Signif. codes: 0 '***' 0.001 '**' 0.01 '*' 0.05 '.' 0.1 ' ' 1
Multiple R-Squared: 0.970964 Adjusted R-Squared: 0.967738
3SLS estimates for 'turneq' (equation 2)
Model Formula: turnoverts ~ gdpts
Instruments: ~capitalts + wagets
Estimate Std. Error t value Pr(> t)
(Intercept) 185,509,185 2.55699e+08 0.7255 0.47699
gdpts 0.51 2.76004e-02 18.4518 1.37e-13 ***
Signif. codes: 0 '***' 0.001 '**' 0.01 '*' 0.05 '.' 0.1 ' ' 1
Multiple R-Squared: 0.950805 Adjusted R-Squared: 0.948215

Հավասարումների գործակիցները նշանակալի են 99% վստահելիության մակարդակում: **Մեկ միավոր ՀՆԱ-ի աճը հանգեցնում է առևտրաշրջանառության 0.51 միավոր աճին, մեկ միավոր աշխատավարձի աճը հանգեցնում է ՀՆԱ-ի 26,582,473 միավոր աճին, իսկ մեկ միավոր կապիտալի աճը՝ 0.65 միավոր ՀՆԱ-ի աճին:** Կարող ենք հաշվել աշխատավարձ-առևտրաշրջանառություն քրոսս-գործակից. մեկ ԱՄՆ դոլարով աշխատավարձի աճը հանգեցնում է 13,557,061 ԱՄՆ դոլարով արտաքին առևտրաշրջանառության աճին, մասնավորապես՝ 3,931,548 ԱՄՆ դոլարով արտահանման և 9,625,514 ԱՄՆ դոլարով ներմուծման աճին: Նշենք նաև, որ հետազոտվող ժամանակահատվածում գնաճի հետևանքով աշխատավարձի աճի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա միջինում ամեն տարի նվազում է 913,579 ԱՄՆ դոլարով, այսինքն՝ գնաճի ազդեցությունը կազմում է տարեկան 3.4%:

Դիտարկվել են նաև ըստ մարզերի ՀՆԱ-աշխատավարձ էլաստիկության գործակիցները (աղյուսակ 1.9):

ՀՆԱ-աշխատավարձ էլաստիկության գործակիցներ | Աղյուսակ 1.9

Մարզեր	1 ԱՄՆ դոլար աշխատավարձ-ՀՆԱ աճ, ԱՄՆ (դոլար)
Երևան	15,325,872
Արագածոտն	367,555
Արարատ	1,403,398
Արմավիր	1,028,780
Գեղարքունիք	540,204
Լոռի	559,655
Կոտայք	1,138,145
Շիրակ	598,003
Սյունիք	1,908,944
Վայոց ձոր	181,096
Տավուշ	309,775

Յուրաքանչյուր էլաստիկության գործակից ցույց է տալիս նշված մարզում 1 ԱՄՆ դոլարով աշխատավարձի աճի հետևանքով ստացված համախառն ներքին արդյունքի աճը: Երևանի տնտեսական ներուժի համեմատական առավելությունն ակնհայտ է: Մեկ ԱՄՆ դոլարով աշխատավարձի աճն էական ազդեցություն է թողնում նաև Սյունիքի, Արարատի, Կոտայքի և Արմավիրի մարզերի ՀՆԱ-ի ծավալների աճի վրա, սակայն տնտեսական ոչ բավարար ներուժ ունեցող մարզերում նշված ազդեցությունն էական չէ:

1.3

ՀՀ զբաղվածության քաղաքականության և զբաղվածության ապահովման պետական ծրագրերի ընթացիկ արդյունքների վերլուծությունը, գնահատումը և առարկայական ներուժի ավելացման լուծումները

2020 և 2021 թթ. իրականացվել են սույն աշխատության հիմնական նպատակներին և խնդիրներին միտված հետազոտություններ՝ «Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վերլուծություն և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ», «Բնակչության զբաղվածության ապահովման հիմնախնդիրներն ու պետական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» թեմաներով³⁰:

Զբաղվածության ոլորտի 2021-2022 թթ. կատարված օրենսդրական փոփոխությունների ուսումնասիրության արդյունքներով կարելի է եզրակացնել, որ դեռևս ապահովված չեն այն ծրագրային լուծումները, որոնք մշակվել և ներկայացվել էին վերը վկայակոչված հետազոտությունների շրջանակներում: Այդ լուծումները հիմնականում վերաբերում են զբաղվածության պետական ծրագրերի նպատակայնության և արդյունավետության բարձրացմանը, արդյունքառեն թիրախավորման ապահովմանը, ինչպես նաև զբաղվածության պետական աջակցության առանձին ծրագրերի ծախսարդյունավետության բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետության զբաղվածության ոլորտը և աշխատանքի շուկան, հատկապես՝ վերջին տարիներին տեղի ունեցող սոցիալ-

³⁰ Տե՛ս Թադևոսյան Զ. և ուրիշներ, Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վերլուծություն և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ, Տնտեսագետ, 2021, 246 էջ («Ամբերդ» մատենաշար 40), <https://amberd.asue.am/wp-content/uploads/2021/06/Amberd-40.pdf>, Թադևոսյան Զ. և ուրիշներ, Բնակչության զբաղվածության ապահովման հիմնախնդիրներն ու պետական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում, Եր., Տնտեսագետ, 2022, 204 էջ («Ամբերդ» մատենաշար 52), <https://asue.am/upload/files/amberd/Amb%2052.pdf>

տնտեսական մարտահրավերներով պայմանավորված, ենթարկվում է դինամիկ փոփոխությունների: Առաջ են գալիս նոր հիմնախնդիրներ և դրանց արագ արձագանքելու համար ճկուն կառուցակարգերի գործադրման օբյեկտիվ անհրաժեշտություն:

Խտաքը հատկապես զբաղվածության պետական կարգավորման ամենամյա ծրագրերի (այսուհետ՝ ամենամյա ծրագիր), ինչպես նաև այդ ծրագրերում ներառվող զբաղվածության պետական աջակցության առանձին ծրագրերի՝ իրավիճակային փոփոխություններից բխող համարժեք ծրագրավորման և իրականացման արդյունավետության մասին է:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ամենամյա ծրագրերի իրականացման ընթացիկ խնդիրների պարբերական գնահատումները և դրանց հնարավոր լուծումների հետևողական ապահովումը առարկայական անհրաժեշտություն են յուրաքանչյուր հաջորդ տարվա ծրագրի մշակման գործընթացներում: Ուստի, զբաղվածության պետական կարգավորման 2023 թ. ծրագրի մշակման աշխատանքներին մասնագիտական աջակցություն տրամադրելու նպատակով սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել և համադրվել են նախորդ միջնաժամկետում ամենամյա ծրագրերի հաստատված և փաստացի կատարողականի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները, ինչպես նաև առաջիկա միջնաժամկետում ամենամյա ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսված ցուցանիշները:

Ուսումնասիրությունների և համեմատական վերլուծությունների ամփոփ արդյունքներով վեր են հանվել հատկանշական որոշակի խնդիրներ, որոնք վերաբերում են զբաղվածության աջակցության առանձին ծրագրերի արդյունավետությանը և նպատակայնությանը: Ստորև նկարագրված խնդիրների հնարավոր լուծման առաջարկությունները գործնականում կարող են նպաստել զբաղվածության պետական աջակցության ծրագրերի ներուժի ակտիվացմանը և էական ավելացմանը, այդպիսով նաև՝ այդ ծրագրերի նպատակայնության և ծախսարդյունավետության հնարավոր բարձրացմանը:

Նախ՝ ներկայացվել են ընդհանուր գնահատումների ամփոփ արդյունքները:

2018 թվականի պետական բյուջեով ամենամյա ծրագրին հատկացվել է 1,627 միլիարդ ՀՀ դրամ, փաստացի ծախսվել է 27.2%-ը, իսկ տարվա ընթացքում պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցները վերաբաշխվել են և ճշտման հետևանքով կրճատվել են 56%-ով: 2019 թ. ամենամյա ծրագրի ճշտված բյուջեն կազմել է 2,027 միլիարդ ՀՀ դրամ, որի փաստացի կատարողականը կազմել է 84,5%³¹:

³¹ Թադևոսյան Զ. և ուրիշներ, Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վերլուծություն և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ, Եր., Տնտեսագետ, 2021, 246 էջ («Ամբերդ» մատենաշար 40), <https://amberd.asue.am/wp-content/uploads/2021/06/Amberd-40.pdf>, էջ 97, 103-104:

2020 թ. պետական բյուջեով ամենամյա ծրագրին հատկացվել է 2,426 միլիարդ ՀՀ դրամ: Փաստացի ծախսվել է 80%-ը: Տարվա ընթացքում պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցները վերաբաշխվել են և ճշտման հետևանքով կրճատվել են շուրջ 16%-ով³²:

2021 թ. պետական բյուջեով ամենամյա ծրագրին հատկացվել է 2,1 միլիարդ ՀՀ դրամ: Նույն թվականին փաստացի ծախսը կազմել է 1.403 միլիարդ ՀՀ դրամ կամ պետական բյուջեով հատկացվածի 66.8%-ը³³: 2021 թ. ամենամյա ծրագրի ֆինանսական թերակատարումը կազմել է հատկացված ֆինանսավորման 1/3-ը, իսկ տարվա ընթացքում ամենամյա ծրագրին հատկացված միջոցների շուրջ 30%-ի չափով իրականացվել են միջծրագրային վերաբաշխումներ: Հետևաբար, զբաղվածության աջակցության մի շարք ծրագրեր, որոնց հիմնական արդյունքը գործազուրկներին աշխատանքի տեղավորումն ու նրանց կայուն զբաղվածության ապահովումն է, նախորդ միջնաժամկետում ամբողջությամբ չեն իրականացվել և դրանց թերակատարման հետևանքով չեն ապահովվել նախապես թիրախավորված ծրագրային ցուցանիշները:

2022 թ. պետական բյուջեով ամենամյա ծրագրին հատկացվել է 1.564 միլիարդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ 25.5% պակաս չափով: Ավելին, ՀՀ 2023-2025 թթ.պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով՝ ըստ տարիների ամենամյա ծրագրերի ֆինանսավորման ան նախատեսված չէ: Այն մնալու է անփոփոխ՝ տարեկան 1.564 միլիարդ ՀՀ դրամ:

2022 թվականից սկսած՝ պետական բյուջեով ամենամյա ծրագրի ֆինանսավորման կրճատումը խնդրահարույց է մի շարք օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված:

Մասնավորապես, 2022-2025 թթ. ամենամյա ծրագրերի ֆինանսավորման նախատեսված չափերը համարժեք չեն զբաղվածության պետական քաղաքականության ռազմավարական հիմնական նպատակադրումներին և թիրախներին, ինչպես նաև աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակից բխող՝ առկա և սպասվող նոր մարտահրավերներին: Հաջորդը. ամենամյա ծրագրերի պլանավորվող ընդհանուր ցուցանիշների հիմքում դրվում են նախորդ տարվա փաստացի ցածր կատարողական ցուցանիշները, և լիարժեք հաշվի չի առնվում այդ ծրագրերի աջակցության միջոցով շահառուների կայուն զբաղվածության ապահովման չօգտագործվող ներուժը:

Այս տեսանկյունից կարևոր է նշել. «Աշխատիր, Հայաստան» ռազմավարության հիմնական նպատակադրումների ապահովման համար թիրախա-

³² Թադևոսյան Զ. և ուրիշներ, Բնակչության զբաղվածության ապահովման հիմնախնդիրներն ու պետական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում, Եր., Տնտեսագետ, 2022, 204 էջ («Ամբերդ» մատենաշար 52), <https://asue.am/upload/files/amberd/Amb%2052.pdf>, էջ 103-107:

³³ Ամենամյա ծրագրերի ընթացիկ վերաբաշխումների և տարեկան փաստացի կատարողականի վերաբերյալ տվյալները ստացվել են ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչությունից:

վորվել էր ամենամյա ծրագրերի պետական ֆինանսավորման կայուն աճ՝ 2020-2025 թթ. տարեկան ֆինանսավորման առնվազն հինգ տոկոսով ավելացում՝ նախորդ տարվա համեմատ³⁴: Ռազմավարությամբ ամրագրված է նաև «նպաստից դեպի աշխատանք» հիմնական սկզբունքը, որը օբյեկտիվորեն ենթադրում է, որ սոցիալական պաշտպանությանը հատկացվող պետական ֆինանսավորման կառուցվածքում սոցիալական նպաստներից առաջանցիկ պետք է ավելանա զբաղվածության պետական աջակցությանը տրամադրվող ֆինանսավորումը:

Փաստերը, սակայն, հակառակն են արձանագրում: 2023-2025 թթ. նախատեսված է սոցիալական պաշտպանության ոլորտի տարեկան ֆինանսավորման կայուն աճ՝ 645.03 միլիարդ ՀՀ դրամից մինչև 748.32 միլիարդ ՀՀ դրամ (նախորդ տարվա համեմատ միջինը՝ 7,7%-ով)³⁵, իսկ ամենամյա ծրագրերի ֆինանսավորման չափերն անփոփոխ են:

Հետևաբար, 2023-2025 թթ. նվազելու է ամենամյա ծրագրի ֆինանսավորման տեսակարար կշիռը սոցիալական պաշտպանության ոլորտի տվյալ տարվա ֆինանսավորման ամբողջ ծավալում:

Սյուս կողմից, ՀՀ 2023-2025 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նպատակադրված է բնակչության աղքատ խավի շրջանում կրթության և աշխատանքի քաջակերում, գործարարությունը խթանող ծրագրերի իրականացում, զբաղվածության կարգավորման ծրագրերի հասցեականության բարձրացում, աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում, գործազրկության մակարդակի նվազում:

Եռամյա ժամանակահատվածում այս հիմնական նպատակից բխող զբաղվածության պետական ծրագրերի թիրախը վերաբերում է միայն 2024 թվականին, այն է՝ ամենամյա ծրագրում ընդգրկված անձանց տեսակարար կշիռը տարվա ընթացքում գործազուրկի կարգավիճակ ստացած անձանց թվաքանակում 27.4%-ից հասցնել 30.1%-ի: Նախ՝ պետք է նշել, որ առաջիկա միջնաժամկետում 2025 թ. ամենամյա ծրագրի ֆինանսական ծախսերը չունեն հիմնական նպատակից բխող՝ անհրաժեշտ թիրախավորում: Հաջորդը՝ ամենամյա ծրագրում գործազուրկների ընդգրկման ընթացիկ ցուցանիշը (27.4%) և դրա թիրախավորված աճը (տարեկան միջինը 1.35 տոկոսային կետ) էապես ցածր է: Սա հիմնականում պայմանավորված է ամենամյա ծրագրերի համար նախատեսված՝ առանց այն էլ ոչ բավարար ֆինանսավորման զրոյական աճով, ինչպես նաև զբաղվածության աջակցության ծրագրերի իրականացնող պետական մարմնի ցածր արդյունավետությամբ: Ցածր գնա-

³⁴ Տե՛ս «Աշխատիր, Հայաստան» ռազմավարություն, ՀՀ Կառավարության 5 դեկտեմբերի 2019 թ. N 1753-Լ որոշման 2-րդ հավելված:

³⁵ «ՀՀ 2023-2025 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր», ՀՀ Կառավարության 30 հունիսի 2022 թ. նիստի օրակարգի 53-րդ հարց, հավելված 1:

հատվող թիրախավորման խնդիրը հիմնավորելու տեսանկյունից հատկանշական են նաև աշխատաշուկան բնութագրող նախորդ միջնաժամկետի և ընթացիկ հետևյալ ցուցանիշները. 2019-2021 թթ.գրանցված վարձու աշխատողների թիվն աճել է միջինում 4.7%-ով: Աշխատանքի շուկայի դրական զարգացումներ են գրանցվում 2022 թվականին, երբ հունվար-ապրիլին պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 9,1%-ով, իսկ գրանցված վարձու աշխատողներինը՝ աճել 5.9%-ով: Ավելին՝ ՀՀ 2023-2025 թթ.պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով թիրախավորված է ՀՆԱ-ի տարեկան 7% աճ:

Հաջորդիվ՝ ներկայացվել են ամենամյա ծրագրերի և դրանցում ներառվող զբաղվածության աջակցության առանձին ծրագրերի գնահատումների արդյունքները:

Նախ՝ անդրադարձ է կատարվել ամենամյա ծրագրերի՝ 2021 և 2022 թվականներին պետական բյուջեներով հաստատված, 2023 թ. համար պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված, ինչպես նաև 2021 թ. փաստացի կատարողականի ընդհանուր ցուցանիշներին:

Նշված ցուցանիշների համեմատական վերլուծության և ընթացիկ գնահատումների արդյունքները ևս հատկանշական են 2023 թ. ամենամյա ծրագրի մշակման համար: Դրանք ամփոփ ձևով ներկայացվել են սույն հետազոտության հավելված 1 և 2-ում:

2021 թ. նախատեսված էր իրականացվող բոլոր ծրագրերում ընդգրկել 5290 շահառուների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող 199 անձանց: Սակայն, ծրագրերի ֆինանսական ցածր կատարողականի և տարվա ընթացքում միջծրագրային վերաբաշխումների հետևանքով ծրագրերում փաստացի ընդգրկվել են 3484 շահառուներ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող 174 անձինք: Նախատեսված թիրախից բացասական շեղումը բավականին բարձր է՝ 34%: Ծրագրերի իրականացման արդյունքում նախատեսված էր 2476 անձանց կայուն զբաղվածության ապահովում, սակայն փաստացի ապահովվել է 1247 անձանց կայուն զբաղվածություն: Նախատեսված արդյունքային այս թիրախից բացասական շեղումը առավել բարձր է՝ 50.4%:

Փաստորեն, 2021 թ. ֆինանսական ցածր կատարողականով, ինչպես նաև ոչ ֆինանսական թիրախավորված ցուցանիշներից փաստացի ցուցանիշների բացասական էական շեղումներով պայմանավորված, 2022 թ. ամենամյա ծրագրի հաստատված ֆինանսավորումը, նախորդ տարվա համեմատ, կրճատվել է 25.5%-ով, իսկ արդյունքային ցուցանիշները՝ հետևյալ չափերով. ծրագրերում ընդգրկված շահառուների թիվը՝ 33.5%-ով, ծրագրերի իրականացման արդյունքում կայուն զբաղվածություն ձեռք բերած անձանց թիվը՝ 32.8%-ով: Ընդ որում, ՀՀ 2023-2025 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի

ծրագրով 2023 թ. ամենամյա ծրագրի նախատեսված ֆինանսավորումը նախորդ տարվա համեմատ չի փոխվել:

Ըստ էության, 2022-2023 թթ. ամենամյա ծրագրերի ընդհանուր ցուցանիշների հիմքում դրվել են 2021 թ. էապես ցածր կատարողականի փաստացի արդյունքները և հաշվի չի առնվել այդ ծրագրերի չօգտագործվող առարկայական ներուժը՝ գործազուրկների կայուն զբաղվածության ապահովման նպատակով: Սա էական բացթողում է 2022 թ. ամենամյա ծրագրի մշակման գործընթացներում, որն անհրաժեշտ է լիարժեք հաշվի առնել հաջորդ տարվա ամենամյա ծրագրի մշակման շրջանակներում:

Հաջորդիվ ներկայացնենք ամենամյա ծրագրերում ընդգրկման ենթակա զբաղվածության պետական աջակցության հիմնական ծրագրերի ընթացիկ ուսումնասիրության և գնահատումների ամփոփ արդյունքները:

Մասնագիտական ուսուցման կազմակերպումը գործազուրկների, հատկապես՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման հիմնական ծրագիրն է: 2021 թ. նշված ծրագրում ընդգրկվել են 487 շահառու կամ հաստատված թիրախային ցուցանիշի 70%-ը: Ծրագրի աջակցությամբ փաստացի աշխատանքի են տեղավորվել 30 շահառուներ՝ թիրախավորվածից շուրջ 12 անգամ պակաս: Սրա հետևանքով 2022 թ., նախորդ տարվա համեմատ, ծրագրում ընդգրկվող շահառուների թիվը կրճատվել է 38%-ով, իսկ ծրագրի աջակցությամբ նախատեսվող աշխատանքի տեղավորման ցուցանիշի թիրախը՝ շուրջ 3 անգամ: Ավելին, կատարված միջծրագրային ընթացիկ վերաքաշման հետևանքով մասնագիտական ուսուցման ծրագիրը 2022 թ. ընդհանրապես չի իրականացվել, որն աննախադեպ բացասական արձանագրում է այս ծրագրի ներդրումից ի վեր:

2023 թ. ամենամյա ծրագրով նախատեսված է մասնագիտական ուսուցման ծրագրի ֆինանսավորման 47%-ի չափով ան՝ նախորդ տարվա ծրագրով նախատեսվածի համեմատ: Այս աճը, բնականաբար, օբյեկտիվ է ծրագրի չօգտագործվող առարկայական ներուժի տեսանկյունից: Մակայն, ծախսարդյունավետության առումով խնդրահարույց են ծրագրի իրականացման արդյունքում աշխատանքի տեղավորման ցածր ցուցանիշները՝ 2021 թ. փաստացին և 2022 թ. նախատեսվածը:

Այս խնդիրներն անհրաժեշտ է հաշվի առնել 2023 թվականի համար ծրագրի ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշները նախատեսելիս: Մասնավորապես, անհրաժեշտ է ծրագրի աջակցությամբ աշխատանքի տեղավորման ցուցանիշը 2021 թ. փաստացի ապահովված 6.1%-ից բարձրացնել և թիրախավորել առնվազն 30%, որը նախատեսված է եղել 2022 թ. ամենամյա ծրագրով:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրի փաստացի կատարողականը շարունակում է խիստ ցածր մնալ թիրախավոր-

վածից: 2021 թ. փաստացի կատարողականը կազմել է 66%: 2022 թվականի համար նախատեսված շահառուների թիվը շուրջ 2 անգամ ցածր է նախորդ տարվա փաստացի կատարված ցուցանիշից: Վերջինս կարելի է գնահատել որպես այս ծրագրով աշխատանքի տեղավորման առարկայական ներուժի ակնհայտ թերի օգտագործում:

2023 թ. ամենամյա ծրագրով նախատեսված է աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրի ֆինանսավորման շուրջ 5 անգամ ան՝ նախորդ տարվա ծրագրով նախատեսվածի համեմատ: Ծրագրի չօգտագործվող առարկայական ներուժի տեսանկյունից այս ան օբյեկտիվ է:

Մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության ծրագրի 2021 թ. շահառուների ընդգրկման փաստացի ցուցանիշը կազմել է նախատեսվածի 86%-ը, իսկ ծրագրի իրականացման արդյունքում աշխատանքի տեղավորման փաստացի ցուցանիշը 70.2%-ով գերազանցել է թիրախավորված ցուցանիշը: Այս ծրագրի ընթացիկ գնահատման խնդիրներն են՝ ծրագրում շահառուների ընդգրկման ցուցանիշի 14%-ով թերակատարումը և փաստացի բարձր արդյունավետության պարագայում 2022 թվականի համար ծրագրի շահառուների թվի 10% կրճատումը՝ նախորդ տարվա համեմատ:

2023 թ. այս ծրագրի ֆինանսավորման համար նախատեսված շուրջ 23% անը կարելի է գնահատել օբյեկտիվ: Խնդիրն այն է, որ 2022 թ. այս ծրագրի աջակցությամբ աշխատանքի տեղավորման թիրախային ցուցանիշը շուրջ 4 անգամ պակաս է 2021 թ. փաստացի արձանագրվածից: 2023 թ. անհրաժեշտ է նախորդ տարվա համեմատ առնվազն երկու անգամ բարձրացնել ծրագրի թիրախային այս ցուցանիշը:

2020-2021 թթ. փաստացի չեն կազմակերպվել աշխատանքի տոնավաճառներ՝ չնայած յուրաքանչյուր տարի նախատեսված է եղել 10 տոնավաճառ: 2022-2023 թթ. ևս նախատեսված չէ աշխատանքի տոնավաճառի կազմակերպում: Սա խնդրահարույց է ամենամյա ծրագրի առկա ներուժի իրացման և ծախսարդյունավետության տեսանկյունից, եթե հաշվի առնենք այս ծրագրի շահառուների հնարավոր լայն մասնակցությունը և այն, որ զբաղվածության աջակցության մյուս ծրագրերի համեմատ այս ծրագրի աջակցությամբ աշխատանքի տեղավորման ծախսերն ամենավիճաբան են մեկ անձի հաշվով: Հետևաբար, անհրաժեշտ է 2023 թ. պետական ֆինանսավորմամբ նախատեսել յուրաքանչյուր մարզում առնվազն մեկական աշխատանքի տոնավաճառի կազմակերպում:

Գործազուրկին իր բնակավայրից դուրս այլ վայրում աշխատանքի տեղավորման համար աջակցության ծրագիրը 2021 թ. նախատեսված է եղել 22 շահառուների համար, սակայն չի իրականացվել: 2022-2023 թթ. այս ծրագիրը նախատեսված չէ: Այս ծրագրի զրոյական կատարողականը մտահոգիչ է նաև այն իմաստով, որ ծրագիրը միտված է տարածքային համաչափ զար-

գացմանը՝ հեռավոր բնակավայրերում պահանջարկված մի շարք մասնագիտություններով (հատկապես՝ ուսուցիչներ, բժիշկներ) շարունակաբար թափուր աշխատատեղերի համալրմանը: Հետևաբար, անհրաժեշտ է 2023 թ. նախատեսել այս ծրագրի իրականացումը՝ առնվազն 2020 թ.ծրագրում փաստացի ընդգրկված շահառուների թվով:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման ծրագրում 2021 թ. փաստացի ընդգրկվել և աշխատանքի են տեղավորվել շուրջ 2.8 անգամ ավելի քիչ թվով շահառուներ, քան թիրախավորված է եղել: 2022 թ., նախորդ տարվա նախատեսվածի համեմատ, այս ծրագիրը շուրջ 2 անգամ ավելի քիչ թվով շահառուների համար է:

2023 թ. այս ծրագրի ֆինանսավորման շուրջ կրկնակի աճը 2021 թ. նախատեսված ֆինանսավորման չափով նախատեսելը կարելի է գնահատել օբյեկտիվ:

Աշխատանքի տեղավորման նպատակով գործատուին այցելության համար դրամական օգնության ծրագիրը 2020-2022 թթ. չի իրականացվում: Նախատեսված չէ նաև 2023 թվականին: Խնդիրն այն է, որ այս ծրագրի աջակցությունը կարևոր և անհրաժեշտ է հատկապես անապահով ընտանիքների անդամ հանդիսացող գործազուրկների՝ աշխատանք փնտրելու ակտիվությունը բարձրացնելու տեսանկյունից: Հետևաբար, 2023 թ. պետք է նախատեսել այս ծրագրի ֆինանսավորումը՝ առնվազն նախորդ իրականացված վերջին տարվա փաստացի կատարողականի չափով:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցության ծրագրի 2020 թ. փաստացի կատարողականը կազմել է շուրջ 100%: Սակայն, ծրագիրը փաստացի չի իրականացվել 2021 թ., թեպետ հաստատված էր 50 շահառուների համար: 2022 թ. հաստատված է 33 շահառուների համար, սակայն կատարված միջծրագրային ընթացիկ վերաբաշխումների հետևանքով չի իրականացվել: 2023 թ. նախատեսված է 180 շահառուների համար: Այս ծրագիրն ունի ինքնազբաղվածության ապահովման էական բարձր ներուժ: Սակայն, ծախսարդյունավետության տեսանկյունից անհրաժեշտ է օբյեկտիվորեն հաշվի առնել, որ այս ծրագրով նախատեսվող մեկ շահառուի աջակցության ծախսի չափը շուրջ երկու անգամ գերազանցում է աշխատանքի տեղավորման աջակցության մյուս ծրագրերի միջին ցուցանիշը:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց՝ անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության ծրագիրը բավականին բարձր՝ 95% կատարողական է ունեցել 2021 թվականին: Նախորդ տարվա համեմատ, 2022 թվականին, ծրագրի շահառուների թիվը նվազել է ընդամենը 10%-ով:

Սակայն, խնդրահարույց է, որ 2023 թ. այս ծրագրի ֆինանսավորում նախատեսված չէ, թեև ունի չիրացված մեծ ներուժ, որը պետք է հաշվի առնել 2023 թ. ամենամյա ծրագրի մշակման շրջանակներում:

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության ծրագրով 2021 թ. փաստացի ֆինանսավորումը 10%-ով պակաս է եղել նախատեսվածից, սակայն ծրագրում ընդգրկվել են նախատեսվածից շուրջ 17%-ով շատ շահառուներ: Ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների անհամաչափության այս խնդիրը հաշվի չի առնվել 2022 թ. ծրագրի պլանավորման համար:

2023 թ. պլանավորման գործընթացներում անհրաժեշտ է վերանայել այս ծրագրում մեկ շահառուի ընդգրկման ֆինանսական ցուցանիշը՝ հիմք ընդունելով նախորդ երկու տարիներին փաստացի կատարված ծախսի միջին չափը, համապատասխանաբար նվազեցնելով առնվազն 25%-ով: Նախորդ տարվա համեմատ, 2023 թ., այս ծրագրի ֆինանսավորումը նախատեսված է ավելացնել շուրջ 3,2 անգամ, ինչը օբյեկտիվորեն բխում է ծրագրի աջակցությամբ գյուղատնտեսական ժամանակավոր զբաղվածության ապահովման ներուժի բարձրացման իրական անհրաժեշտությունից:

Երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման ծրագրի շահառուների ընդգրկման փաստացի կատարողականը 2021 թ. կազմել է 61.3%: Սակայն, առավել էական խնդիր է այն, որ ուսուցում անցած շահառուների ընդամենը 7,5%-ն է տեղավորվել աշխատանքի: Մյուս կողմից, 2022-2023 թթ.այս ծրագրի ֆինանսավորում նախատեսված չէ, թեև առկա է առարկայական մեծ անհրաժեշտություն:

Երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության ծրագիրը ներդրումից ի վեր ունեցել է 100%-ին մոտ կատարողական: Մեր փորձագիտական գնահատումներով՝ այս ծրագրի շահառուների կողմից ներկայացվող ներուժային պահանջարկը շուրջ կրկնակի անգամ գերազանցում է 2020-2022 թթ. նախատեսված շահառուների թիվը: Հետևաբար, առարկայական խնդիր է այն, որ 2023 թ. այս ծրագրի ֆինանսավորում նախատեսված չէ: 2023-ին անհրաժեշտ է այս ծրագրի համար ֆինանսավորում նախատեսել առնվազն նախորդ տարվա չափով:

Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ծրագիրը 2020 թ. ունեցել է շուրջ 100% կատարողական: Սակայն, 2021 թ. ծրագիրը չի իրականացվել, թեև ամենամյա ծրագրով նախատեսված էր 84 ծրագիր՝ 840 շահառուների համար: 2022 թ. նախատեսված է 60 ծրագիր՝ 480 շահառուների համար:

2023 թ. նախատեսված է նախորդ տարվա համեմատ 80%-ով ավելացնել ծրագրի ֆինանսավորումը: Այս ծրագրի ֆինանսավորման անը պետք է ունենա շարունակական բնույթ: Ծրագիրն ունի օբյեկտիվ անհրաժեշտություն՝ նկատի ունենալով ժամանակավոր զբաղվածության, համայնքներում հանր-

օգուտ արդյունքի ապահովման, ինչպես նաև անապահովության նպաստից ստացվող եկամուտները սեփական աշխատանքով ավելացնելու վերջինիս առարկայական հնարավորությունները:

Հարկ է արձանագրել, որ զբաղվածության պետական աջակցության առանձին ծրագրերի վերլուծության հիմնա վրա վեր հանված խնդիրները հիմնականում ունեն շարունակական բնույթ՝ ըստ տարիների ոչ էական առանձնահատկություններով: Ըստ առանձին ծրագրերի՝ վեր հանված ու գնահատված ընթացիկ խնդիրներին վերաբերող լուծումները միտված են զբաղվածության պետական աջակցության առկա ներուժի ընդլայնմանը, ծրագրերի ծախսարդյունավետության բարձրացմանը: Հետևաբար, օբյեկտիվ անհրաժեշտություն են այդ խնդիրները և առաջարկվող իրավիճակային ընթացիկ լուծումները ըստ զբաղվածության առանձին ծրագրերի լիարժեք հաշվի առնել զբաղվածության կարգավորման 2023 թ. պետական ծրագրի մշակման գործընթացներում:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2.1 Պետական և ոչ պետական հատվածներում աշխատավարձերի ձևավորման մեթոդաբանությունների, կառուցակարգերի քաղաքականության միջազգային փորձի ուսումնասիրությունը և համեմատական վերլուծությունը

Սոցիալական կողմնորոշում ունեցող երկրներում զբաղվածության, եկամուտների և աշխատավարձի քաղաքականություններն իրականացվում են տարբեր մակարդակներում, սակայն որոշիչը պետական կարգավորումն է: Եկամուտների և աշխատավարձի պետական կարգավորումն իրականացվում է համապատասխան սոցիալական երաշխիքների, հարկային և սոցիալական ապահովության համակարգերի օրենսդրական սահմանման միջոցով: Եկամուտների և աշխատավարձի գործող քաղաքականությունների արդյունավետության մասին կարելի է դատել՝ ելնելով բնակչության կենսամակարդակից և կյանքի որակից, զբաղվածության, գնաճի, աղքատության մակարդակից, երկրի սոցիալական կայունությունից:

Հետազոտության սույն բաժնում ուսումնասիրվել են առաջատար երկրների աշխատավարձերի սահմանման տարբեր համակարգերը, կատարվել է համեմատական վերլուծություն:

Արևմտյան Եվրոպայի երկրների աշխատանքային և սոցիալական իրավասությունները

Զբաղվածության քաղաքականության ոլորտի կառավարման սկզբունքներն այն ընդհանուր առաջնահերթություններն ու նպատակներն են, որոնք առաջարկում է Եվրամիության հանձնաժողովը՝ համաձայնեցնելով ազգային կառավարությունների հետ և ընդունվում են ԵՄ Խորհրդի կողմից³⁶:

ԵՄ յուրաքանչյուր աշխատող ունի որոշակի նվազագույն իրավունքներ, որոնք ենթադրում են՝

- **աշխատանքի պաշտպանություն և անվտանգության տեխնիկա՝** ընդհանուր իրավունքներ և պարտականություններ, աշխատատե-

³⁶ ԵՄ պաշտոնական կայքէջ <https://ec.europa.eu/social/main.jsp?catId=101&intPageId=3427>

ղեր, աշխատանքային սարքավորումներ, կոնկրետ ռիսկեր և խոցելի աշխատողներ,

- **հավասար հնարավորություններ կանանց և տղամարդկանց համար՝** հավասար վերաբերմունք աշխատավայրում, հղիություն, հղիության և ծննդաբերության արձակուրդ, երեխայի խնամքի արձակուրդ,
- **պաշտպանություն սեռի, ռասայի, կրոնի, տարիքի, հաշմանդանության և սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դեմ,**
- **աշխատանքային օրենսդրություն՝** ոչ լրիվ աշխատանքային օր, պայմանագրեր, աշխատանքային ժամ, երիտասարդների աշխատանքի տեղավորում, աշխատակիցների իրազեկում և խորհրդատվություն³⁷:

ԵՄ-ում գոյություն ունեն աշխատավարձի սահմանման տարբեր մոտեցումներ³⁸: Այն գործոնները, որոնք առնչվում են աշխատավարձի համապարփակ փոփոխություններին, ներառում են՝

- կենտրոնացման աստիճանը (մակարդակ, որտեղ ընթանում են աշխատավարձի վերաբերյալ բանակցությունները),
- այն, թե ինչպես է աշխատավարձն արտացոլում արտադրողականության տարբերությունները (տնտեսության տարբեր հատվածների, ընկերությունների և աշխարհագրական տարածքների միջև),
- բանակցությունների՝ ազգային մակարդակի նպատակները հաշվի առնելու աստիճանը (տարբեր մակարդակներում համակարգման աստիճանը):

Աշխատավարձի վերաբերյալ բանակցությունները կարող են լինել կա՛մ խիստ ապակենտրոնացված (հիմնականում ընկերությունների մակարդակով, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում և Բալթյան երկրներում), կա՛մ խիստ կենտրոնացված (աշխատավարձի ձևավորումը ազգային մակարդակով, օրինակ՝ Բելգիայում և Սլովենիայում), կա՛մ կարող են անցկացվել միջանկյալ մակարդակով, սովորաբար՝ ոլորտների մակարդակով (օրինակ՝ Իտալիայում): Ավելի կենտրոնացված մոտեցման դեպքում մասնակիցները հաշվի են առնում աշխատավարձի փոփոխությունների ազդեցությունն ամբողջ տնտեսության ցուցանիշների վրա: Ավելի ապակենտրոնացված մոտեցումը կարող է արդյունավետության բարձրացմանը նպաստել այնքանով, որքանով աշխատավարձը և արտադրողականությունը ընկերության մակարդակով կհամաձայնեցվեն, ինչը կարող է նպաստել աշխատանքային ռեսուրսների ավելի արդյունավետ բաշխմանը: Սա նաև նշանակում է, որ բարձր հա-

³⁷ ԵՄ պաշտոնական կայքէջ, <https://ec.europa.eu/social/main.jsp?catId=82&langId=en>

³⁸ Վերլուծությունները կատարվել են European Commission. European Semester Thematic Factsheet, Wage Developments and Wage Setting Systems հրատարակման նյութերով:

վանականություն կա, որ անբարենպաստ տնտեսական շուկր կփոխհատուց-վի աշխատուժի ծախսերի ճշգրտմամբ՝ զբաղվածության փոխարեն:

Ընկերությունների մակարդակում ձեռք բերված համաձայնագրերը չեն կարող աշխատողների համար պակաս բարենպաստ լինել, քան ոլորտային համաձայնագրերն են: Այնուամենայնիվ, կան մի շարք երկրներ (օրինակ՝ Պորտուգալիան և Իսպանիան), որտեղ ընկերության մակարդակով համա-ձայնագիրը գերակա ուժ ունի ճյուղի մակարդակով համաձայնագրի նկատ-մամբ, նույնիսկ եթե այն պակաս բարենպաստ է աշխատողի համար:

Աշխատավարձի փոփոխությունները կարող են նաև կախված լինել տարբեր սուբյեկտների միջև համակարգման ընթացիկ վիճակից: Համա-կարգումը կարող է լինել «հորիզոնական», երբ որոշ ոլորտներ հանդես են գալիս որպես աշխատավարձի համաձայնագրերի հաստատման առաջնորդ-ներ, իսկ մյուսները հետևում են նրանց, կամ երբ համաձայնագրեր են կնքվում ասոցիացիաների միջև: Համակարգումը կարող է նաև լինել «ուղ-ղահայաց», երբ ազգային մակարդակով երկկողմ կամ եռակողմ համաձայ-նագրերը, որոնք հովանավորվում են սոցիալական գործընկերների և կա-ռավարության կողմից, սահմանում են աշխատավարձի բանակցությունների ուղեցույցներ ավելի ցածր մակարդակներում (օրինակ՝ Բելգիայում): Համա-կարգումը կարող է տեղի ունենալ աշխատավարձի ապակենտրոնացված բանակցություններին զուգահեռ:

Կոլեկտիվ համաձայնագրերի ընդլայնման և աշխատավարձի որոշման կենտրոնացված մոտեցման հետ կապված խնդիրն այն է, որ աշխատավար-ձը կարող է լիովին հարմարվել նույն ոլորտի ընկերությունների կամ աշխար-հագրական տարածքների միջև արտադրողականության տարբերություննե-րին: Որքան մեծ են տարբերությունները, այնքան բարձր է այն ռիսկը, որ եր-կարածումը կհանգեցնի բարձր աշխատավարձով (ցածր զբաղվածության և արտադրության ծավալների) աշխատուժի ոչ ճիշտ բաշխմանը՝ ցածր ար-տադրողականությամբ ֆիրմաների միջև: Նույնը վերաբերում է որոշակի ըն-կերություններին կամ տարածքներին բնորոշ շուկերին: Աշխատավարձի մա-սին համաձայնագրերի միջին տևողության վրա կարող է նաև ազդել աշ-խատավարձի հարաբերական ճկունությունը: Եվրոպայում կոլեկտիվ համա-ձայնագրերի միջին տևողությունը հաճախ տատանվում է 1-3 տարի, սակայն որոշ դեպքերում կարող է ավելի մեծ լինել:

Աշխատավարձի ինդեքսավորման մեխանիզմները, որոնք ընդգրկում են բոլոր կամ առնվազն աշխատողների մեծ մասին, ներկայումս գործում են չորս երկրներում՝ Բելգիայում, Կիպրոսում, Լյուքսեմբուրգում և Մալթայում: Այդ դեպքերում աշխատավարձի ճշգրտումը տեղի է ունենում ավտոմատ կերպով և հիմնվում է վերջին գնաճի վրա: ԵՄ այլ երկրներ՝ Դանիան, Ֆրան-սիան, Իտալիան և Նիդեռլանդները ևս այս համակարգն օգտագործել են, սակայն ներկայումս այն չեղարկվել է: Իսպանիայում աշխատավարձի ին-

դեքսավորումը նախկինում կոլեկտիվ պայմանագրերում ընդունված երևույթ է եղել, այժմ այն այլևս օրենքով չի պահանջվում: Ֆրանսիայում, Նիդեռլանդներում և Սլովենիայում նվազագույն աշխատավարձը ինդեքսավորվում է ըստ գների, կամ աշխատավարձի, կամ էլ երկուսը միասին: Բելգիայում, Լյուքսեմբուրգում և Մալթայում ինդեքսավորվում է ինչպես նվազագույն, այնպես էլ ընդհանուր աշխատավարձը:

Ինդեքսավորման դրույթները հեշտացնում են երկարատև համաձայնագրերի կնքումը, արտադրական հարաբերություններում ապահովում են կայունություն և նվազեցնում են աշխատավարձի բանակցությունների հետ կապված կրկնվող հակամարտությունների ռիսկը:

Բացի շրջանակային պայմանների սահմանումից և եռակողմ համաձայնագրերին մասնակցելուց, կառավարություններն ունեն մի շարք այլ լծակներ, որոնք կարող են օգտագործել աշխատուժի արժեքի վրա ազդելու համար: Դրանք ներառում են հանրային հատվածի աշխատավարձը, քանի որ պետական հատվածում զբաղվածության մակարդակը և պայմանները կարող է ազդել մասնավոր հատվածում աշխատուժի առաջարկի և պահանջարկի վրա այն հիմքով, որ պետական հատվածը հաճախ խոշոր գործատու է: Սոցիալական վճարների և աշխատուժի ուղղակի հարկման փոփոխություններն ազդում են աշխատանքի վարձատրության հետ չկապված ծախսերի վրա և, հետևաբար, կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում աշխատուժի տեսակարար ծախսերի վրա ազդելու ևս մեկ միջոց են:

Աշխատավարձն արձագանքում է նաև տնտեսական պայմանների փոփոխություններին՝ ներառյալ աշխատուժի հարկումը, զբաղվածության պաշտպանության օրենսդրությունը և գործազրկության նպաստների համակարգը:

ԵՄ և արհմիությունների դերը աշխատավարձի քաղաքականության որոշման մեջ, ընդհանուր առմամբ, սահմանափակված են ոչ մեծ թվով ոլորտներով: ԵՄ-ն իրավունք ունի սահմանելու աշխատողների պաշտպանության նվազագույն ստանդարտները, ինչպիսիք են առավելագույն աշխատանքային ժամանակը կամ որոշակի խմբերի պաշտպանությունը³⁹:

Աշխատավարձի քաղաքականությունը և գործադուլի իրավունքը, որոնք կենտրոնական նշանակություն ունեն արհմիությունների և աշխատողների համար, ԵՄ իրավասության շրջանակների մեջ չեն մտնում: Այդ մասին հստակ նշված է Եվրոպական միության գործունեության պայմանագրում (the Treaty on the Functioning of the European Union): Սակայն, ԵՄ հիմնարար իրավունքների խարտիան սահմանում է աշխատողների ու արհմիությունների հիմնական իրավունքները, գործատուների ասոցիացիաների և արհմիությունների միջև բանակցություններ վարելու կոլեկտիվ իրավունքը, արհմիու-

³⁹ Վերլուծությունը կատարվել է Markuz Koza. Wage Policy. How Unions and Labour Rights are Being Squeezed by the EU տեղեկատվության հիման վրա, <https://the-european-illusion.eu/the-book/analysis/eu-wages-policy/>

թյունների միավորվելու իրավունքը և կոլեկտիվ գործողություններ ձեռնարկելու իրավունքը՝ աշխատողների շահերի պաշտպանության համար, այդ թվում՝ գործադուլի իրավունքը:

Եվրամիությունում տնտեսական ճգնաժամի քաղաքականության ընդունումից հետո անդամ երկրները փոխեցին աշխատավարձի և աշխատանքային պայմանների իրենց քաղաքականությունը: Աշխատավարձի քաղաքականության և աշխատանքային իրավունքների ոլորտում սահմանվել են նոր կանոններ՝ եվրոպական տնտեսական քաղաքականության պարտադիր համակարգումն ապահովելու նպատակով:

Աշխատավարձի քաղաքականությունը նոր տնտեսական կառավարման համակարգում խաղում է կենտրոնական դեր: Այն ազդել է աշխատողների վրա երկու հիմնական եղանակներով. **սոսաջին** այն է, որ «խիստ խնայողության քաղաքականությունն» ուղղակիորեն ազդում է պետական հատվածում աշխատողների աշխատավարձի վրա: Խիստ խնայողության ծրագրերը հաճախ ներառում են աշխատավարձի սառեցում, աշխատավարձի սահմանափակում և պետական ծառայության կրճատում: Շատ երկրներում պետական հատվածում գործող աշխատավարձի համաձայնագրերը ծառայում են որպես մասնավոր հատվածի բանակցությունների մոդել, որի արդյունքում պետական հատվածում կրճատումները տարածվում են աշխատողների ողջ շրջանակի վրա:

Եվրոպական ինստիտուտների հայտարարած նպատակներից **երկրորդն** էլ այն է, որ ԵՄ անդամ պետությունները և եվրոգոտին ոչ միայն ձեռք բերեն ավելի բարձր արտաքին մրցունակություն, այլև ավելի մրցունակ լինեն միմյանց նկատմամբ: Այդ տեսանկյունից, արտահանման բարձր մակարդակ ունեցող երկրների և ներմուծող երկրների միջև անհավասարակշռության մեղմման առումով աշխատավարձի փոփոխությունները կարող են ունենալ դրական ազդեցություն: Ուստի, Հանձնաժողովը պահանջում է, որ այն երկրները, որոնք մեծ քանակությամբ ապրանքներ և ծառայություններ են ներմուծում, ենթարկվեն ներքին արժեզրկման, այսինքն՝ արտադրական ծախսերը կրճատեն հատկապես աշխատավարձի առումով:

Վերջին տարիներին ԵՄ-ն 18 անդամ պետություններին ներկայացրել է աշխատավարձի քաղաքականության վերաբերյալ պահանջներ: Ընդ որում, ԵՄ հանձնաժողովը Ֆինլանդիայից, Իտալիայից և այլ երկրներից պահանջել է աշխատավարձի ավելի չափավոր բարձրացում: Շվեդիայում հանձնաժողովը ձգտում է ցածր աշխատավարձի ոլորտն ընդլայնել, իսկ մի քանի այլ երկրներ (Իտալիա, Բելգիա, Իսպանիա և այլն) ստացել են աշխատավարձի բանակցությունները ընկերությունների մակարդակ տեղափոխելու հանձնարարական: Եվրոյի «փրկության» հետ կապված՝ մի շարք միջոցառումներ են սահմանվել Հունաստանի, Պորտուգալիայի, Իռլանդիայի և Կիպրոսի նկատմամբ, որոնք ներառում են պետական ծառայության աշխատավարձի կրճա-

տումը, նվազագույն աշխատավարձի կրճատումը կամ սառեցումը, աշխատանքային օրվա տևողության ավելացումը, անարդարացի աշխատանքից պաշտպանության թուլացումը և ոչ վստահելի զբաղվածության նոր ձևերը: Դրա արդյունքում 2008-2013 թթ. ընթացքում ԵՄ 27 երկրներից 19-ում կոլեկտիվ պայմանագրերի ընդգրկման շրջանակները նեղացել են: Որոշ երկրներում գրանցվել է իրական աշխատավարձի զգալի և շարունակական նվազում:

Անշուշտ, արհմիությունները և քաղաքացիական հասարակությունը դիմադրում են այդ իրադարձություններին՝ կոչ անելով արմատական փոփոխության ենթարկել տնտեսական քաղաքականությունը, ամրապնդել սոցիալական ապահովության համակարգերը և Եվրոպայում ստեղծել սոցիալական միություն: Կարծիք կա, որ Եվրամիությունում իրականացվող կառուցվածքային բարեփոխումներն ուղղված են հենց արհմիությունների իշխանության թուլացմանը՝ կոլեկտիվ համաձայնություններից մինչև սոցիալական ապահովության համակարգեր:

Ավանդաբար, Եվրոպական որոշ երկրներում, պետական կառավարման ոլորտում աշխատանքի վարձատրության համակարգը, ամրագրված բյուրոկրատական պրակտիկային համապատասխան, չափազանց կոշտ է: Աշխատավարձը սահմանվում է ըստ դասի, և կառավարման ոլորտի յուրաքանչյուր պաշտոնյայի դասային աստիճանը կարգավորվում է միասնական դասի շրջանակներում: Ըստ դասերի պաշտոնների ստեղծումը և դասակարգումը չի գտնվում առանձին կազմակերպությունների իրավասության ներքո, այլ սահմանվում է կառավարության կամ խորհրդարանի կողմից: Միակ ուղին, ըստ որի պետական ծառայողը կարող է «ազդել» իր աշխատավարձի վրա, ավելի բարձր աստիճանի տեղափոխվելն է: Նման անցման գերակշռող չափանիշը ծառայության տարիների քանակն է: Շատ երկրներում գրեթե բոլոր պետական ծառայողները ստանում են աշխատավարձ և, ավելի կամ պակաս, ավտոմատ կերպով բարձրանում են կարիերայի աստիճաններով՝ կախված աշխատած տարիներից և մանրակրկիտ մտածված կարիերայի հետագծերից, կամ նույնիսկ մինչև կյանքի վերջը երաշխավորված զբաղվածությունից (վարձում): Նման հանգամանքներում ծառայողական ատեստավորումն առօրյա վարչական կյանքի վրա իրական ազդեցություն չի ունենում: Սակայն, այդ մոտեցումը տարբեր տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական գործոնների ազդեցությամբ փոխվել է՝ կախված երկրներից, պաշտոնների և դասերի տեսակից: Մասնավորապես, դեր է խաղացել մասնավոր հատվածի համեմատությամբ աշխատանքի վարձատրության կառուցվածքի անհավասարակշռությունը: Պետական կառավարումը աշխատաշուկայում ավելի գրավիչ դարձնելու համար կառավարությունները, կարիերայի վրա հիմնված աշխատավարձին ի լրումն, սկսել են դիտարկել, այսպես կոչված, Pay-for-performance (վճար՝ արդյունքատվության դիմաց) պրակտիկան:

ԵՄ երկրների մեծ մասը PfP սխեմաներն սկսել է փորձարկել մի քանի տասնամյակ առաջ, և մինչ օրս այդ գործառույթը շարունակվում է (աղյուսակ 2.1):

PfP համակարգի զարգացումը ԵՄ-ում, 2007-2017 թթ.⁴⁰ | Աղյուսակ 2.1

	2007	2017	NOTE
<i>Այո՝ արդյունքաչափության դիմաց վճարին</i>	Բելգիա	Բելգիա, Բուլղարիա Չեխիայի Հանրապետություն	
	Բուլղարիա	Էստոնիա	
	Դանիա	Ֆինլանդիա	
	Էստոնիա	Ֆրանսիա	
	Ֆինլանդիա	Գերմանիա	Մեծ Բրիտանիան չի մասնակցել
	Ֆրանսիա	Հունաստան	2017-ի հարցմանը:
	Գերմանիա	Հունգարիա	Լատվիան
	Հունգարիա	Իռլանդիա	2007-ի հարցման ժամանակ մաս չի կազմել:
	Իտալիա	Իտալիա	
	Լիտվա	Լատվիա	
	Մալթա	Լիտվա	
	Սլովակիա	Մալթա	
	Իսպանիա	Նիդեռլանդներ	
	Շվեդիա	Լեհաստան	
	Մեծ Բրիտանիա	Պորտուգալիա Սլովակիա, Սլովենիա Իսպանիա, Շվեդիա	
<i>Արդյունքաչափության դիմաց վճարման քաղաքականություն</i>	Ավստրիա	Ավստրիա	
	Կիպրոս	Խորվաթիա	
	Չեխիա	Կիպրոս	Խորվաթիան և Եվրոպական հանձնաժողովը
	Հունաստան	Դանիա	2007-ի հարցմանը չեն մասնակցել:
	Իռլանդիա	Լյուքսեմբուրգ	
	Լյուքսեմբուրգ	Նիդեռլանդներ	
	Նիդեռլանդներ	Ռումինիա	
	Լեհաստան	Եվրոպական հանձնաժողով	
Պորտուգալիա			
Ռումինիա			
Սլովենիա			

Ծանոթություն. Կարմիր գույնը ցույց է տալիս, որ երկիրը, 2007 թ. համեմատությանը, 2017-ին է անցում կատարել Pay-for-Performance համակարգին:

Անհրաժեշտ ենք համարում փաստել, որ չարդարացված ցածր աշխատավարձից պաշտպանությունը նախատեսված է ԱՄԿ-ի «Նվազագույն աշ-

⁴⁰ Աղբյուրը՝ Pay-for-Performance in the Civil Service of the EU. European Public Administration Country Knowledge, էջ 11. https://ec.europa.eu/info/sites/default/files/ht0921294enn.en_.pdf
https://ec.europa.eu/info/sites/default/files/ht0921294enn.en_.pdf

խատավարձի սահմանում» N131 1970 թ. կոնվենցիայով⁴¹: Նշված կոնվենցիայի համաձայն՝ պետությունները պարտավորվում են կիրառել վարձու աշխատողների բոլոր խմբերն ընդգրկող նվազագույն աշխատավարձի սահմանման համակարգ, որոնց աշխատանքային պայմանները նպատակահարմար են դարձնում նման համակարգի կիրառումը: Նվազագույն աշխատավարձի մակարդակը որոշելիս հաշվի են առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշխատավորների և նրանց ընտանիքների կարիքները, տնտեսական նկատառումները, այդ թվում՝ տնտեսական զարգացման և զբաղվածության բարձր մակարդակի պահպանման պահանջները:

Եվրոպական բոլոր երկրներում գոյություն ունեն նվազագույն աշխատավարձի այս կամ այն ձևեր, սակայն ազգային համակարգերը խիստ տարբերվում են նվազագույն աշխատավարձի մակարդակներով, մասշտաբներով, քաղաքական և ինստիտուցիոնալ սահմանմամբ⁴²: Սկզբունքորեն, գոյություն ունեն երկու հիմնական հատկանիշներ, որոնք թույլ են տալիս կառուցել նվազագույն աշխատավարձի տարբեր ազգային համակարգեր:

- Նախ, առկա են նվազագույն աշխատավարձի օգտագործման տարբեր ոլորտներ և կիրառելիություն: Եթե որոշ երկրներում սահմանվում է միասնական ազգային նվազագույն աշխատավարձ, ապա այլ երկրներում այն սահմանվում է միայն ճյուղային կամ մասնագիտական մակարդակով:
- Երկրորդ, նվազագույն աշխատավարձի սահմանման եղանակներում գոյություն ունեն հիմնարար տարբերություններ, որոնք կարող են սահմանվել կա՛մ օրենսդրական կարգավորմամբ, կա՛մ կոլեկտիվ պայմանագրերով:

2022 թ. հունվարի 1-ի դրությամբ ԵՄ 27 անդամ պետություններից 21-ում սահմանվել է ազգային նվազագույն աշխատավարձ: Ամսական նվազագույն աշխատավարձը մեծապես տարբերվում է տարբեր անդամ պետություններում, այն տատանվում է 332 եվրոյից (Բուլղարիա) մինչև 2257 եվրոյի (Լյուքսեմբուրգ) շրջանակներում (գծապատկեր 2.1): Գործող ազգային համախառն ամսական նվազագույն աշխատավարձի (արտահայտված եվրոյով) մակարդակների տարբերություններն այսպիսին են.

- Լյուքսեմբուրգում, Իռլանդիայում, Նիդեռլանդներում, Բելգիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում ազգային նվազագույն ամսական աշխատավարձի մակարդակը բարձր է 1500 եվրոյից: Դրանցում

⁴¹ https://www.ilo.org/wcmsp5/groups/public/-ed_norm/-normes/documents/normativeinstrument/wcms_c-131_ru.htm

⁴² St' u European minimum wage policy: A concept for wage-led growth and fair wages in Europe Thorsten Schulten Hans Boeckler Foundation, Dusseldorf, International Journal of Labour Research, 2012, Vol. 4 Issue, էջ 86-88. <http://nationalminimumwage.co.za/wp-content/uploads/2015/09/0204-European-minimum-wage-policy-A-concept-for-wage-led-growth-and-fair-wages-in-Europe.pdf>

նվազագույն աշխատավարձը տատանվում է 1603 եվրոյից (Ֆրանսիայում) մինչև 2257 եվրո (Լյուքսեմբուրգ):

- Սլովենիայում (1074 եվրո) և Իսպանիայում (1126 եվրո) ազգային նվազագույն ամսական աշխատավարձը 1000 եվրոյից բարձր է, սակայն ցածր է 1500 եվրոյից:

Ամսական 1000 եվրո ազգային նվազագույն աշխատավարձ ունեցող երկրներն են Պորտուգալիան, Մալթան, Հունաստանը, Լիտվան, Լեհաստանը, Էստոնիան, Չեխիան, Սլովակիան, Խորվաթիան, Հունգարիան, Ռումինիան, Լատվիան և Բուլղարիան: Այդ երկրների նվազագույն աշխատավարձը տատանվում է 332 եվրոյից (Բուլղարիա) մինչև 823 եվրոյի (Պորտուգալիա) շրջանակներում:

Եվրոպայում գործում է նվազագույն աշխատավարձի մակարդակների համեմատության երեք մեթոդ:

Առաջին այն է, որ միասնական արժույթով՝ եվրոյով հաշվարկված նվազագույն աշխատավարձի ընթացիկ արժեքների միջև լինի համապատասխանություն: Համեմատության այս մեթոդի հետ կապված խնդիրն այն է, որ միշտ, փոխարժեքի փոփոխության արդյունքում այն ներառում է վիճակագրորեն խեղաթյուրող ազդեցություն: Բացի դրանից, նվազագույն աշխատավարձի ընթացիկ արժեքը դրա իրական արժեքի մասին քիչ տեղեկություն է պարունակում, հատկապես՝ որոշակի ազգային սոցիալ-տնտեսական շրջանակների աշխատողների առումով: **Երկրորդ մեթոդի** հաշվարկման հիմքում դրվում են տարբեր երկրներում գների մակարդակները և կյանքի արժեքն արտացոլող գնողունակության ստանդարտները: **Երրորդ մեթոդն** արտացոլում է երկրի մակարդակով նվազագույն աշխատավարձի հարաբերական մեծության և միջին աշխատավարձի համեմատությունը: Վերջինս տեղեկություն է պարունակում ազգային աշխատավարձի աստիճանակարգում նվազագույն աշխատավարձի պաշտպանության իրական մակարդակի և նվազագույն աշխատավարձ ստացող անձանց ընդհանուր կարգավիճակի մասին: Նվազագույն աշխատավարձի մակարդակների համեմատությունը կարող է անցկացվել ժամային սկզբունքով կամ ամսական կտրվածքով: Գործնականում, նույնիսկ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի դեպքում, արհմիությունները, սովորաբար, նվազագույն աշխատավարձի հաստատման գործընթացին շատ ակտիվ մասնակցություն են ունենում:

Նվազագույն աշխատավարձի տարբեր գնողունակությունից բացի, դրա իրական պաշտպանության արժեքը կարող է չափվել հարաբերական արժեքով, այսինքն՝ աշխատավարձի ազգային կառուցվածքի նկատմամբ ազգային նվազագույն աշխատավարձով: Աշխատավարձի ազգային կառուցվածքը կարելի է որոշել՝ օգտագործելով, այսպես կոչված, Քեյթսի համաթիվը, ըստ որի նվազագույն աշխատավարձի հարաբերական մակարդակը չափվում է

կա՛մ որպես երկրի մակարդակով մեդիան (median) աշխատավարձի, կա՛մ միջին (average) աշխատավարձի մաս⁴³:

Նվազագույն աշխատավարձի եվրոպական քաղաքականության հայեցակարգի հիմնական գաղափարը համակարգված քաղաքական այնպիսի մոտեցման մշակումն է, ըստ որի՝ Եվրոպայում աշխատողները պետք է ստանան **արդար աշխատավարձ**: Արդար աշխատավարձի վերաբերյալ բանավեճն ավանդությանն է, և շատ երկրներ ճանաչում են այդ իրավունքը, որն էլ ամրագրված է միջազգային, տարածաշրջանային և ազգային մի քանի կոնվենցիաներով:

Արդար աշխատավարձի գաղափարը կյանքի կոչելու համար 1970-ական թթ. Եվրոպայի խորհուրդը համաձայնեցրեց այն սահմանումը, ըստ որի՝ բոլոր աշխատողները պետք է ստանան համախառն աշխատավարձ, որը չպետք է ցածր լինի ընդհանուր աշխատավարձի 68%-ից: 1990-ական թթ. Եվրոպայի խորհուրդը փոխեց իր վերաբերմունքը համախառն աշխատավարձի նկատմամբ և մշակեց նոր շեմ, որը սահմանում էր, որ արդար զուտ աշխատավարձը պետք է լինի երկրի միջին զուտ աշխատավարձի առնվազն 60%-ը: Սակայն, նվազագույն աշխատավարձի եվրոպական քաղաքականությունը չի վերաբերում եվրոպական ոչ մի երկրի նվազագույն աշխատավարձին, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի ազգային սահմանման ինստիտուցիոնալ ներդաշնակեցմանը: Դա չի նշանակում, որ Եվրոպայում յուրաքանչյուր երկիր պետք է օրենքով նախատեսված ազգային նվազագույն աշխատավարձ սահմանի: Գործնականում դա կարող է նշանակել, որ ԵՄ-ն որոշում է ազգային նվազագույն աշխատավարձի եվրոպական նպատակը կամ նորմը, որը երկրում մեդիան կամ միջին աշխատավարձի որոշակի տոկոսն է: Ամեն դեպքում կարևորվում է այն, որ եվրոպական յուրաքանչյուր աշխատող ստանում է արժանապատիվ աշխատավարձ:


Երկար ու հակասական բանավեճերից հետո Եվրոպական արհմիությունների կոնֆեդերացիան վերջապես ներկայացրել է առաջարկ, ըստ որի՝ ազգային նվազագույն աշխատավարձ ունեցող բոլոր եվրոպական երկրներում դրանց մակարդակները պետք է լինեն երկրի միջին աշխատավարձի առնվազն 50%-ը և երկրի մեդիան աշխատավարձի 60%-ը⁴⁴:

⁴³ Median աշխատավարձը վերաբերում է որոշակի պաշտոնի կամ մասնագիտության աշխատողների ամենաբարձր և ամենացածր (50:50) աշխատավարձի միջև սահմանին, այսինքն՝ ուսումնասիրվող բնակչության աշխատողների կեսն ավելի քիչ է վաստակում, իսկ մյուս կեսն ավելի շատ է վաստակում: Այն ներկայացնում է միջին աշխատավարձի ճշգրիտ արտացոլումը, քանի որ նվազեցնում է երկու սանդղակների ծայրահեղ արժեքները:

Միջին աշխատավարձը հարկերի վճարումից հետո ընդհանուր եկամտի ցուցանիշն է, որը բաժանվում է զբաղված աշխատողների ընդհանուր թվին: Միջին աշխատավարձը ճշգրտվում է՝ հաշվի առնելով գնողունակության պարիտետը:

⁸¹ Տե՛ս նույն տեղը, հոդված 45 և 83:

⁸² Տե՛ս նույն տեղը, հոդված 178:

⁸³ Տե՛ս նույն տեղը, հոդված 179:

⁸⁴ Տե՛ս նույն տեղը, հոդված 181-191:

ցիչ աշխատավարձ՝ հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ, պարգևատրումներ և այլն), որոնք կիրառվում են տվյալ կազմակերպությունում՝ անկախ վճարման աղբյուրից⁸⁵: Օրենսգրքում մանրամասնվել են աշխատողի միջին ամսական աշխատավարձի չափը որոշելու մի շարք մոտեցումներ՝ կապված հնգօրյա, վեցօրյա աշխատանքային շաբաթվա, մեկ ամսից պակաս աշխատած աշխատողների միջին օրական աշխատավարձի չափը որոշելու հետ:

Այն դեպքում, երբ սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական կամ միջին ժամային աշխատավարձերը համապատասխանաբար ցածր են տվյալ պահին գործող նվազագույն ամսական աշխատավարձից կամ ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափից, ապա միջին ամսական կամ միջին ժամային աշխատավարձերի փոխարեն համապատասխանաբար հիմք է ընդունվում տվյալ պահին գործող նվազագույն ամսական աշխատավարձը կամ ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը:

2022 թ. հունվար-մայիս ամիսներին ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձը ներկայացված է աղյուսակ 2.6-ում: 2021 թ., 2000 թ. համեմատությամբ, միջին աշխատավարձը ՀՀ-ում ավելացել է մոտ 9 անգամ՝ 22706 ՀՀ դրամից հասնելով 204048 ՀՀ դրամի⁸⁶:

Աղյուսակ 2.6

ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձը 2022 թ. հունվար-մայիս ամիսներին⁸⁷

Ժամանակահատվածը	Բացարձակ արժեքը	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկարմամբ (%)	Նախորդ ժամանակաշրջանի նկարմամբ (%)
Հունվար	204307.0	106.2	79.9
Փետրվար	206511.0	107.8	101.1
Մարտ	227173.0	114.7	110.0
Ապրիլ	217033.0	109.8	95.5
Մայիս	220523.0	111.8	101.6
Տարեկապից	215228.0	110.1	-

Հայաստանի Հանրապետությունում «Նվազագույն աշխատավարձի մասին» օրենքն ընդունվել է 2003 թ. դեկտեմբերի 17-ին, մինչ այդ նվազագույն աշխատավարձը կարգավորվել է Վարչապետի որոշման հիման վրա⁸⁸: Նվազագույն աշխատավարձի մասին օրենքի հողված 1-ը և 2-ը, սկսած 2005 թվականից, 10 անգամ ենթարկվել են փոփոխության: 2004 թ. հունվարի 1-ին նվազագույն աշխատավարձի մակարդակը սահմանվել էր 55.000 ՀՀ դրամ⁸⁹:

⁸⁵ Տե՛ս նույն տեղը, հոդված 195:

⁸⁶ <https://armstat.am/am/?nid=12&id=08001>

⁸⁷ <https://armstat.am/am/?nid=12&id=08001>

⁸⁸ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=2322>

⁸⁹ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=94713>

2019 թ. նոյեմբերի 19-ին օրենքի հոդված 1-ում կատարվել է փոփոխություն, ըստ որի՝ ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել է 68 000 ՀՀ դրամ⁹⁰: Օրենքն ուժի մեջ է մտել 2020 թ. հունվարի 1-ին⁹¹:

Գործավարձով և ժամավճարով վարձատրվող աշխատակիցների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը սահմանվել է՝

- աշխատաժամանակի նորմալ տևողության դեպքում (40-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 406 ՀՀ դրամ,
- աշխատաժամանակի կրճատ տևողության դեպքում (36-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 454 ՀՀ դրամ,
- աշխատաժամանակի կրճատ տևողության դեպքում (24-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 680 ՀՀ դրամ⁹²:

ՀՀ սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով կենսապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը, սկսած 2004 թվականից, հաշվարկվում են ոչ պակաս, քան երեք տարին մեկ անգամ՝ կառավարության սահմանած կարգով մշակվող և հաստատած մեթոդական հանձնարարականների հիման վրա⁹³: Սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով կենսապահովման նվազագույն բյուջեի չափը հաշվարկվում է առնվազն տարին մեկ անգամ՝ մինչև հունիսի 30-ը՝ կենսապահովման նվազագույն զամբյուղի կազմում ներառված պարենային, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սպառողական գների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալների հիման վրա:

Այսպիսով, զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում ձևավորվել է աշխատավարձի սահմանման երկու հիմնական մոդել: Անգլոսաքսոնական մոդելի շրջանակներում աշխատանքի վարձատրության սահմանումը հնարավորինս ապակենտրոնացված է: Այն իրականացվում է առանձին ընկերության կամ նույնիսկ դրա կառուցվածքային ստորաբաժանման մակարդակով: Գործատուների և արհմիությունների ազգային և ճյուղային միավորումները աշխատանքի վարձատրության սահմանման գործընթացում զգալի դեր չեն խաղում: Աշխատավարձը ձևավորվում է մրցակցության, շուկայի հստակ ազդանշանների ու պետության մակրոտնտեսական քաղաքականության ազդեցությամբ:

Արևմտյան Եվրոպայի երկրներից շատերն օգտագործում են աշխատավարձի ձևավորման բազմափուլ և հիերարխիկ մեխանիզմ: Այստեղ կոլեկտիվ համաձայնագրերի հիման վրա սոցիալական գործընկերների պայմա-

⁹⁰ <https://www.arlis.am/documentView.aspx?docid=136979>

⁹¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը «Նվազագույն աշխատավարձի մասին» <http://www.irtek.am/views/act.aspx?aid=23369>

⁹² Տե՛ս նույն տեղը, հոդված 2:

⁹³ Տե՛ս ՀՀ օրենքը «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1575>

նավորվածությունները հսկայական դեր են կատարում: Գործատուների և արհմիությունների ազգային միավորումների կայացման և զարգացման շնորհիվ եվրոպական որոշ երկրներում (Շվեդիա, Դանիա) բանակցային գործընթացի ծանրության կենտրոնը տեղափոխվում է ճյուղային և միջնուղային մակարդակ, որն էլ աշխատավարձի սահմանման համար որոշիչ է: Ոլորտային համաձայնագրի պայմաններն իրենց շարունակությունն ու զարգացումը գտնում են առանձին ընկերության մակարդակով կնքվող կոլեկտիվ պայմանագրերում:

Ընդհանուր առմամբ, Արևմտյան Եվրոպայի երկրներին ավելի բնորոշ են սոցիալական գործընկերության ինստիտուտի միջոցով աշխատանքի վարձատրության սահմանման մոդելը, բոլոր սոցիալական գործընկերների կենտրոնացման բարձր մակարդակը և գործողությունների սերտ համակարգումը: Այդպիսի մոդելը ենթադրում է սոցիալական գործընկերների համատեղ պատասխանատվություն ինչպես արժանապատիվ վարձատրություն սահմանելու, այնպես էլ աշխատավարձի չհիմնավորված աճը զսպելու համար: Նման մոդելի գործունեությունը հիմնվում է գործատուների և աշխատողների շահերի պաշտպանության և ներկայացուցչության լավ կառուցվածքավորված համակարգի վրա:

Կատարված ուսումնասիրությունները փաստում են նաև, որ շուկայական մեխանիզմները ենթադրում են մասնավոր բիզնեսում աշխատավարձի մեծության վրա պետական մարմինների անուղղակի ազդեցության հնարավորություն, ուստի վարձու աշխատողների շահերի պաշտպանության համար նվազագույն աշխատավարձի սահմանումը լուծում է սոցիալական կարևորության խնդիրներ: Անվիճելի է, որ այդ գործընթացին պետության չմիջամտելը կհանգեցնի բնակչության կենսամակարդակի վատթարացմանը, այն հիմնավորմամբ, որ աշխատանքի վարձատրությունը բնակչության եկամուտների հիմնական և օրինական աղբյուրն է: Նվազագույն աշխատավարձի սահմանումը, ինչպես տեսնում ենք, միաժամանակ լուծում է երկու խնդիր: Գլխավոր խնդիրն այն աշխատողների կենսամակարդակի բարձրացումն է, որոնց արտադրողականությունը աշխատանքի շուկան գնահատում է բավականին ցածր, իսկ երկրորդը՝ աշխատողների եկամուտների տարբերակման նվազումն է: Այսպիսով, նվազագույն աշխատավարձի ինստիտուտը աշխատանքի շուկայում առաջնահերթ կատարում է սոցիալական գործառույթ: Ցածր վարձատրվող աշխատուժի համար նվազագույն աշխատավարձը կենսամակարդակի բարձրացման գործիք է և պետության կողմից սոցիալական երաշխիքների վկայություն: Սոցիալական արդարությունը պահանջում է նաև, որ նվազագույն աշխատավարձի և միջին աշխատավարձի միջև խզումը մեծ չլինի: Ուստի, կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի սահմանման հիմքում պետք է դրվի հետևյալ տրամաբանությունը.

- նվազագույն աշխատավարձը պետք է հավասար լինի կենսապահովման նվազագույն զամբյուղի արժեքին՝ միաժամանակ ոչ պակաս լինելով միջին աշխատավարձի 40%-ից:
- Քանի որ աշխատանքային օրենսդրությունը կարգավորում է նաև աշխատանքի վարձատրության առնչությամբ գործատու-աշխատող հարաբերությունները՝ ծանր, վնասակար, առանձնապես ծանր և առանձնապես վնասակար աշխատանքների կատարման դեպքում, ապա նման աշխատանքներում, զբաղվածների նվազագույն աշխատավարձը սահմանելիս, ելնելով նրանց աշխատանքային պայմանների և առողջության համար վտանգավորության իրողությունից, պետք է ցուցաբերել որոշակի տարբերակված մոտեցում: Այդ առումով մեզանում կիրառելի կլինի Ֆրանսիայում օգտագործվող բանաձևը, որը կարելի է սահմանել որպես ճյուղային միջին աշխատավարձ: Նշված բանաձևն այսպիսին է՝

$$\Delta MWt = \Delta CPI \text{ Nov } t-2/\text{Nov } t-1 + 0.50 \times \Delta \text{Blue collar hourly wage Sep } t-2/\text{Sep } t-1,$$

որտեղ՝

ΔMWt-ն նվազագույն աշխատավարձի աճն է,

ΔCPI Nov t-2/Nov t-1-ն՝ գների ինդեքսի աճն է նախորդ տարվա նոյեմբերի 2-ից մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ը,

ΔBlue collar hourly wage-ը՝ «կապույտ օձիքավորների» ժամային աշխատավարձի աճն է նախորդ տարվա նոյեմբերի 2-ից մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ը:

Միջազգային կազմակերպությունների փորձագետները մատնանշում են, որ նվազագույն աշխատավարձի չափերի իջեցումը հանգեցնում է այնպիսի բացասական հետևանքների, ինչպիսիք են զբաղվածության և աշխատանքի վարձատրության անօրինական ձևերի տարածումը, աշխատանքային կարգապահության անկումը, գործատուների կողմից էժան աշխատուժ օգտագործելու հնարավորության մեծացումը և այլն⁹⁴: Մինևնույն ժամանակ, աշխատանքի վարձատրության նվազագույն չափը որոշելիս բարձր նշանողի սահմանումը կարող է աշխատուժի արժեքի բարձրացման արդյունքում հանգեցնել զբաղվածության նվազմանը: Ըստ այդմ, նվազագույն աշխատավարձի չափը սահմանելու և կարգավորելու գործընթացը պետք է կրի հավասարակշռված բնույթ, որպեսզի նպաստի աշխատուժի վերարտադրության, սոցիալական և պաշտպանական գործառույթի իրականացման օպտիմալացմանը:

⁹⁴ Տե՛ս **Рои́к В. Д.**, Минимальная заработная плата - геном социально-трудовых отношений // Социально-трудовые исследования. 2019, № 3 (36), էջ 55-62:

2.2

**Տարիքային աշխատանքային կենսաթոշակային համակարգերի միջազգային փորձը:
Կենսաթոշակային համակարգերի հայեցակարգային կառուցակարգերը, տիպերը և տարրերը**

Կենսաթոշակային համակարգերի՝ ներկայումս կիրառվող տիպերի վերաբերյալ ավելի ամբողջական պատկերացում կազմելու համար դրանց հիմնական բաղադրիչները ներկայացվել են՝ ըստ Համաշխարհային բանկի կողմից մշակված «Կենսաթոշակի հայեցակարգային կառուցակարգի բազմապլան մոտեցման» (աղյուսակ 2.7)⁹⁵:

Աղյուսակ 2.7

Կենսաթոշակի համակարգի հայեցակարգային կառուցակարգը

	Հենասյուն 0	Հենասյուն 1	Հենասյուն 2	Հենասյուն 3	Հենասյուն 4
Բնորոշ գծերը	Առանց հատկացումների սոցիալական նպաստներ	Պարտադիր պետական չֆինանսավորվող (կանխավճարային) սխեմա	Պարտադիր ֆինանսավորվող սխեմա	Կամավոր ֆինանսավորվող սխեմա	Կամավոր չֆինանսավորվող սխեմա
Նպատակները	Կանխում է աղքատությունը ծերության ժամանակ	Համահարթեցնում է սպառումը կենսապարբերաշրջանի ընթացքում	Ուժեղացնում է կենսաթոշակային համակարգի ֆիսկալ կայունությունը՝ մինչույն ժամանակ ապահովելով սպառման լրացուցիչ համահարթեցում կենսապարբերաշրջանի ընթացքում	Շարժառիթներ է ստեղծում կենսաթոշակային տարիքին անցնելու ժամանակ լրացուցիչ խնայողություններ ունենալու համար	Կանխում է աղքատությունը ծերության ժամանակ և համահարթեցնում սպառումը
Խնդիրները	Ընդհանուր բյուջետային ռեսուրսներից ֆինանսավորման կարիք ունի	Ֆիսկալ կայունությունը զգայուն է ժողովրդագրական, աշխատաշուկայի և քաղաքական զարգացումների նկատմամբ	Կանխված է ֆինանսական ոլորտի գործունեությունից: Անցումային ծախսերը նախնական փուլում մեծ են	Հիմնականում վերաբերում է բարձր եկամտով խմբերին	Ընդհանուր բյուջետային ռեսուրսներից ֆինանսավորման կարիք ունի

Առանց հատկացումների «հենասյուն զրո»-ի (օրինակ, ունիվերսալ սոցիալական նպաստ կամ տեղական, տարածքային կամ կենտրոնական իշխանության կողմից ֆինանսավորվող հիմնական սոցիալական աջակցություն) նպատակն է ծերերին նվազագույն սոցիալական պաշտպանություն ապահովելու միջոցով կրճատել աղքատությունը նրանց շրջանում: Կենսա-

⁹⁵ Տե՛ս Holzmann R., Hinz R.P., Pension systems and reform conceptual framework, Social protection&Labor, World Bank, June 2008, էջ 5-6:

թոշակային համակարգի այս բաղադրիչի կենսունակությունը կախված է հասարակության այլ խոցելի խմբերի կարիքներից, առկա բյուջետային միջոցներից և համակարգի այլ փոխլրացնող բաղադրիչների առկայությունից: Այս սխեմաներն անվանում են նաև «բաշխողական» և կիրառվում են աշխարհի գրեթե բոլոր երկրներում, որոնք կարող են լինել 4 հիմնական տեսակի՝ հիմնական կենսաթոշակային սխեմաներ, առանձին թիրախավորված կենսաթոշակային եկամտի ծրագրեր, նվազագույն կենսաթոշակներ և սոցիալական աջակցություն, որոնք ապահովվում են պետական հատվածի կողմից և պարտադիր են:

Հիմնական կենսաթոշակի դեպքում կենսաթոշակը հաստատուն դրույքաչափով է կամ կախված է աշխատած տարիներից (սակայն ոչ նախկին եկամուտներից): Այլ աղբյուրներից եկամուտները չեն ազդում հիմնական կենսաթոշակի մեծության վրա:

Թիրախավորված սխեմաների դեպքում ավելի աղքատ կենսաթոշակառուները ստանում են ավելի բարձր կենսաթոշակ, և հակառակը: Թիրախավորումը կարող է լինել ըստ կենսաթոշակային եկամտի (կախված է միայն կենսաթոշակային եկամտի մեծությունից), ըստ ընդամենը եկամտի (կենսաթոշակը կրճատվում է, եթե կենսաթոշակառուն եկամուտ է ստանում իր խնայողություններից), ըստ ընդամենը հարստության (կենսաթոշակի մեծությունը կրճատվում է՝ կախված եկամտից և ակտիվների մեծությունից):

Նվազագույն կենսաթոշակի սխեման նման է թիրախավորված պլաններին, քանի որ նպատակ ունի կանխելու կենսաթոշակի կրճատումը որոշակի մակարդակից ներքև: Սակայն, այս երկուսի ինստիտուցիոնալ կառուցակարգն ու հասանելիության պայմանները տարբեր են: Իրականում, նվազագույն կենսաթոշակը եկամտից կախված սխեմա է և դրա վերաբաշխող բաղադրիչն է: Կենսաթոշակ ստանալու համար կենսաթոշակառուն պետք է որոշակի նվազագույն տարիներ հատկացումներ կատարած լինի:

Սոցիալական աջակցության սխեմայի դեպքում կենսաթոշակառուները ստանում են նույն նպաստը, ինչ ամբողջ բնակչությունը:

Պարտադիր հատկացումներով «առաջին հենասյունը» կախվածություն է ապահովում կենսաթոշակային հատկացումների և եկամուտների միջև, որի նպատակն է փոխարինել կյանքի ընթացքում ստեղծված եկամտի որոշակի մասին: Առաջին հենասյունը, առաջին հերթին, թիրախավորում է անհատների անհեռատեսության, ցածր եկամտի ռիսկերը, կյանքի անորոշության պայմաններում ոչ պատշաճ պլանավորումը, ֆինանսական շուկաների անարդյունավետությունն ու ռիսկերը: Կենսաթոշակային համակարգի այս բաղադրիչը, այսպես կոչված, «կանխավճարային» (Pay-as-You-Go՝ PAYGO) սահմանված նպաստների (Defined Benefit՝ DB) համակարգն է:

Պարտադիր «երկրորդ հենասյունը» անհատական խնայողությունների հաշվի (սահմանված հատկացումների բաղադրիչ՝ Defined Contribution՝

DC) բաղադրիչն է՝ տարբեր կառուցվածքներով, այդ թվում՝ ակտիվ կամ պասիվ ներդրումային կառավարումով, ներդրումներն ու ներդրումային կառավարիչներին ընտրելու տարբեր չափանիշների և կենսաթոշակի դուրս գրման փուլի ընտրության հնարավորությամբ: Կենսաթոշակային համակարգի այս բաղադրիչի կիրառման դեպքում յուրաքանչյուր աշխատողի համար բացվում է անհատական կենսաթոշակային հաշիվ, որում խնայվում և ներդրվում են հատկացումներն ու որի միջոցների հաշվին էլ հետագայում վճարվում է նրա անհատական կենսաթոշակը: Սահմանված հատկացումների սխեմաներն ուղղակի կախվածություն են ապահովում հատկացումների, ներդրումային ծրագրերի և նպաստների միջև: Սահմանված նպաստի սխեմայի համեմատությամբ, այս բաղադրիչի շահառուները ակտիվների մասնավոր կառավարման պատճառով ենթակա են ֆինանսական և գործակալական, գործարքային և կառավարչական ծախսերի, ինչպես նաև երկարակեցության ռիսկերի: Նշված ռիսկերից խուսափելու համար կուտակված կապիտալը կիրառվում է անուիտետ ձեռք բերելու համար, այսինքն՝ ցմահ երաշխավորված կենսաթոշակ ստանալու համար, որը նաև ինդեքսավորվում է: Սահմանված հատկացումներով սխեմաների տարբեր տեսակներ են կիրառվում. ա) գործատուներն են վճարում իրենց աշխատողների համար տվյալ ոլորտի ֆոնդին կամ ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությանը, բ) սխեմաները անհատական են, և աշխատողներն են ընտրում կենսաթոշակային պրովայդերին՝ առանց գործատուի մասնակցության, գ) աշխատողները փոքր հատկացումներ են կատարում պարտադիր անհատական հաշիվներին և ունեն իրենց խնայողությունները ներդնելու տարբերակների ընտրության լայն հնարավորություն, դ) կենսաթոշակային խնայողությունների պետական պլանը կառավարում է պետությունը, սակայն աշխատողներն ունեն պորտֆելի ընտրության հնարավորություն:

Շատ երկրներ համակցում են բաշխողական և կուտակային համակարգերը (Defined Benefit complemented by Defined Contribution):

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ անհատական կենսաթոշակային կուտակումներն ունեն ավելի բարձր շահութաբերության մակարդակ, քան ընդհանուր պետական ֆոնդերը: Սակայն, դրանց թերությունն այն է, որ բարձր են ներդրումային և մակրոտնտեսական անկայունության ռիսկերը: Պետական ֆոնդերն արդյունավետ են նրանով, որ երաշխավորում են համարժեք եկամտային պաշտպանություն, հնարավորություն են տալիս կանխելու աղքատությունը և սոցիալական անհավասարությունը:

Գոյություն ունեն նաև եկամտունեից կախված սխեմաներ, որոնք տարբերվում են «ավանդական» սահմանված կենսաթոշակի մոդելից: Գոյություն ունեն նաև միավորներով համակարգեր, ըստ որի՝ աշխատողները վաստակում են կենսաթոշակային միավորներ՝ ըստ իրենց անհատական եկամտունեի՝ կատարված սոցիալական հատկացումների յուրաքանչյուր

տարվա համար: Կենսաթոշակի անցնելիս՝ ընդամենը կենսաթոշակային միավորները բազմապատկվում են միավոր կենսաթոշակի արժեքով:

20-րդ դարի 1990-ականների կեսերից ի հայտ եկան պայմանական կուտակային համակարգերը (Notional Defined Contribution), որոնց էությունը յուրաքանչյուր աշխատողի համար պայմանական հաշվի բացումն է, որին հաշվեգրված միջոցները մշտապես ինդեքսավորվում են՝ կախված միջին աշխատավարձի աճից կամ գնաճից: Կենսաթոշակի անցնելիս՝ պայմանական հաշվի բոլոր միջոցները հատկացվում են կենսաթոշակատուին տարեկան վճարումների տեսքով:

Կամավոր «երրորդ հենասյունը» տարբեր դրսևորումներ ունի (անձնական խնայողություններ, գործատուի կողմից ֆինանսավորվող, սահմանված նպաստ կամ սահմանված հատկացումներ), սակայն իր բնույթով ճկուն է և դիսկրեցիոն: Այս բաղադրիչները մյուս սխեմաների կառուցվածքային ոչ ճկունությունը փոխհատուցելու համար են ներդրվում, սակայն ենթադրում են երկրորդ հենասյան նույն ռիսկերը:

2ֆինանսավորվող «չորրորդ հենասյունը» ներառում է ոչ ֆորմալ աջակցություն (օրինակ՝ ընտանիքի աջակցությունը), ֆորմալ սոցիալական ծրագրեր (օրինակ՝ առողջապահական կամ կեցության) և այլ անհատական ֆինանսական ու ոչ ֆինանսական ակտիվներ (օրինակ՝ տան ձեռք բերման հիփոթեքային վարկեր)⁹⁶:

ՏՀԶԿ-ի կողմից մշակվել է տաքսոնոմիա, որը խուսափում է հենասյուների գաղափարից⁹⁷: Դրա նպատակն է իրականացնել կենսաթոշակային պլանների, կենսաթոշակային ֆոնդերի և կենսաթոշակային կառույցների գլոբալ դասակարգում, որը կլինի նկարագրական և կհամապատասխանի տարբեր կենսաթոշակային համակարգերով երկրներին:

Մոտեցումը հիմնված է կենսաթոշակային համակարգի յուրաքանչյուր տարրի դերի և նպատակի վրա: Կառուցակարգն ունի երկու պարտադիր շերտ. բաշխողական մաս և ապահովագրական մաս: Կենսաթոշակային համակարգի վերաբաշխող բաղադրիչները երաշխավորում են կենսաթոշակատուների համար որոշակի բացարձակ, նվազագույն կենսամակարդակ: Ապահովագրական բաղադրիչները կենսաթոշակի տարիքում ապահովում են որոշակի թիրախային կենսամակարդակ՝ աշխատելու ընթացքում այդ մակարդակի հետ համեմատած: Կամավոր անդամակցությունը, անկախ նրանից դա անհատական է, թե գործատուն է ապահովում, երրորդ շերտն է: Ըստ այս շերտերի՝ սխեմաները դասակարգվում են ըստ տեսակի՝ պետական կամ մասնավոր, սահմանված նպաստ կամ սահմանված հատկացում:

⁹⁶ Մույն հետազոտության շրջանակներում «չորրորդ հենասյունը» հետազոտության օբյեկտ չի հանդիսանում:

⁹⁷ *Sté'u Pensions at a Glance: Public Policies across OECD Countries*, OECD 2005, էջ 21-25:


Այս տիպաբանությունը տարանջատում է ձևը գործառույթից, նկարագրությունը՝ երաշխավորությունից:

195 երկրների համար հասանելի տվյալների հիման վրա, ԱՄԿ-ի կողմից իրականացված ուսումնասիրության համաձայն, 106 երկիր կիրառում է պետական առանց հատկացումների և հատկացումներով համակցված կենսաթոշակային համակարգեր⁹⁸: Այս երկրներից 21-ում կիրառվում է ունիվերսալ կենսաթոշակի համակարգը՝ որոշակի տարիքից բարձր անձանց համար, իսկ 85-ում՝ կարիքից դրդված (եկամտից կամ նպաստից կախված) կենսաթոշակի համակարգը՝ ծերերի համար, որոնք այլ նպաստ չեն ստանում:

70 երկրներում գործում է միայն հատկացումներով սխեման, որոնցից 67-ում այն պետական սոցիալական ապահովագրական համակարգի մաս է կազմում և հիմնականում վերաբերում է վարձու աշխատողներին և ինքնագրավածներին: 14 երկրում կենսաթոշակն ապահովվում է բացառապես առանց հատկացումների սխեմաների միջոցով: Սրանցից 8-ն ապահովում է ունիվերսալ ծածկույթ:

Ինչպես երևում է գծապատկեր 2.3-ից, երկրների 89,7%-ում կիրառվում է սահմանված նպաստի կենսաթոշակի բաղադրիչը, որի 15,9%-ում այն համակցված է պարտադիր սահմանված հատկացումների սխեմայով: Երկրների 7,3%-ում գործում է միայն պարտադիր սահմանված հատկացումների համակարգը՝ հիմնված անհատական հաշիվների վրա, և միայն 3%-ն ունի պայմանական սահմանված հատկացումների համակարգ: Ինչպես արդեն նշել ենք, երկրների կողմից կիրառվող կենսաթոշակային համակարգերը կախված են տնտեսության այնպիսի առանձնահատկություններից, ինչպիսիք են ժողովրդագրական, աշխատաշուկայի և քաղաքական պայմանները: Օրինակ, ունենալով միևնույն նպատակները՝ ԵՄ տարբեր երկրներ հաճախ ունեն շատ տարբեր կենսաթոշակային համակարգեր: Սա դժվարացնում է բարեփոխումների համար այնպիսի երաշխավորություններ մշակելը, որոնք կիրառական կլինեն բոլոր երկրների համար: Ժողովրդագրական փոփոխականներն (ծնելիության մակարդակը, կյանքի սպասվող տևողությունը և միգրացիայի միտումները) ուղղակի ազդեցություն ունեն կենսաթոշակային համակարգերի վրա:

⁹⁸ St'u World Social Protection Report 2020-2022: Social protection at the crossroads-in pursuit of a better future, International Labour Office-Geneva: ILO, 2021, էջ 168:



Գծապարկեր 2.3

Տարիքային կենսաթոշակների ֆինանսական մեխանիզմները, սահմանված նպաստների և սահմանված հատկացումների համակարգերով երկրների տեսակարար կշիռները (%)⁹⁹

Ավելին, սոցիալական ապահովության հատկացումների մեծությունը կախված է աշխատուժի մասնակցության, ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակից, սոցիալական հատկացումների մեծությունից և աշխատավարձից:

Կենսաթոշակային համակարգերի ցանկացած համեմատություն կարող է հակասական լինել, քանի որ յուրաքանչյուր համակարգ ձևավորվել և զարգացել է որոշակի տնտեսական, սոցիալական, քաղաքական և պատմական պայմաններում: Դա նշանակում է, որ գոյություն չունի այնպիսի համակարգ, որը հնարավոր կլինի որևէ երկրից փոխառել և կիրառել առանց փոփոխությունների: Այնուամենայնիվ, բոլոր համակարգերում գոյություն ունեն որոշակի բնորոշ գծեր և առանձնահատկություններ, որոնք կարող են բարելավել հասարակության տարեց անդամների ֆինանսական եկամուտները, բարձրացնել համակարգի կայունության հավանականությունը և հասարակության վստահությունն ու հավատը:

Սույն հետազոտությունում համեմատության համար ընտրվել են կանխավճարային համակարգից պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին անցում կատարած/կատարող, բազմամակարդակ և ընթացիկ բարեփոխումներ իրականացնող, ըստ Գլոբալ կենսաթոշակային համաթիվ 2021-ի¹⁰⁰ Ա միավոր վաստակած լավագույն երկրների եռյակից Դանիան և

⁹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 169:

¹⁰⁰ 2009 թվականից սկսած՝ Mercer CFA Institute-ի կողմից իրականացվում է աշխարհի 43 երկրների կենսաթոշակային համակարգերի համապարփակ վերլուծություն և հրապարակվում է Գլոբալ կենսաթոշակային համաթիվը: Տե՛ս https://www.lifeyrismal.is/static/files/images/Manadarpostar/2021-global-pension-index-report_web.pdf:

Նիդերլանդները, Նորվեգիան (B+ միավորով), Շվեդիան և Չիլին (B միավորով), Չինաստանը (C միավորով): Տարածաշրջանային երկրներից համեմատության համար ընտրվել է Վրաստանը, ԵԱՏՄ երկրներից ՌԴ-ն և Բելառուսը, ԵՄ երկրներից համաթվի վարկանիշում չներառված Էստոնիան, որի կենսաթոշակային համակարգը, ըստ փորձագետների, ՀՀ կենսաթոշակային համակարգի նախատիպն է:

Կենսաթոշակային համակարգերի հիմնադրույթային շրջանակները համեմատվող երկրներում

Կենսաթոշակային համակարգի առաջին մակարդակը

Աղյուսակ 2.8-ի վերլուծությունից հետևում է, որ համեմատվող բոլոր երկրներն ունեն առաջին մակարդակի բաշխողական սխեմաներ: Ինչպես տեսնում ենք, կան երկրներ, որտեղ բաշխողական համակարգն ունի վերսալ է՝ նախատեսված պարզապես քաղաքացիություն ունեցող անձանց համար, որոնք կախված չեն կատարված հատկացումներից և կարող են կախված լինել կենսաթոշակառուի եկամտից և ունեցվածքից: Դրանք, կարելի է ասել, սոցիալական կամ երաշխիքային կենսաթոշակի բաղադրիչներ են, այլ կերպ ասած, սոցիալական աջակցություն են քաղաքացիների համար՝ որոշակի տարիքից սկսած: Համեմատվող երկրներից Դանիայում, Նորվեգիայում, Շվեդիայում, Նիդերլանդներում և Վրաստանում առաջին մակարդակի սխեմաներից գործում է միայն քաղաքացիության վրա հիմնված պետական վերաբաշխողական համակարգը:

Ընդ որում, Դանիայում հիմնական կենսաթոշակը ստանալու համար պահանջվում է 40 տարվա բնակություն, իսկ 2025 թ. հուլիսի 1-ից հետո՝ 9/10 տարվա բնակություն՝ 15 տարեկանից սկսած մինչև պետական կենսաթոշակային տարիքն ընկած ժամանակահատվածը: Հիմնական կենսաթոշակի մեծությունը Դանիայում ամսական 6419 DKK է (878 եվրո), որը հավասար է համախառն միջին եկամտի 17,6%-ին և կախված է եկամտուներից. եթե աշխատանքային եկամուտը գերազանցում է միջին աշխատավարձի 80%-ը՝ 336 900 DKK-ն, ապա թոշակը նվազեցվում է 30%-ի չափով: Նորվեգիայում երաշխիքային կենսաթոշակ¹⁰¹ ստանալու համար կարող են դիմել 16-66 տարիքային միջակայքում առնվազն 5 տարի բնակություն ունեցողները, իսկ ամբողջական կենսաթոշակի համար՝ 40 տարի, ընդ որում՝ նպաստի մեծությունը բնակության տարիների կրճատման հետ նվազում է: Երաշխիքային կենսաթոշակի մեծությունը կախված է կենսաթոշակառուի եկամտից և կազմում է եկամտային կենսաթոշակի մոտ 80%-ը: Միայնակ կենսաթոշակառուի համար երաշխիքային կենսաթոշակի մեծությունը 2020 թ. կազմել է 191 539 NOK (19 553 ԱՄՆ դոլար), իսկ նվազագույնը՝ 204066 NOK (20832 ԱՄՆ դոլար):

¹⁰¹ Մինչև 1954 թվականը ծնվածները ստանում են նվազագույն կենսաթոշակ:

Կենսաթոշակային համակարգերի հենասյունները՝ ըստ գործող օրենսդրության¹⁰²

ՄԱԿԱՐԳԱԿ	ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱՐԳԱԿ ունիվերսալ ծածկույթ՝ վերաբաշխողական համակարգ				ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԳԱԿ պարտադիր՝ ասպահովագրական համակարգ	
ԱՊԱՀՈՎՈՒՄԸ	ՊԵՏԱԿԱՆ				ՊԵՏԱԿԱՆ Մասնավոր	
ՏԵՄԱԿԸ	Քաղաքացիության վրա հիմնված		Հատկացումների վրա հիմնված		Հատկացումների վրա հիմնված	
	Հիմնական (սոցիալական) կենսաթոշակ	Թիրախավորված կենսաթոշակ	Հիմնական կենսաթոշակ	Նվազագույն կենսաթոշակ	Տեսակը	Տեսակը
<i>2018 թվականից 22 փարեկանում առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործած անձանց համար</i>						
Զիչի		V		V		DC
Զինասրահ			V		NDC+DC	DC
Դանիա	V	V			DC	DC (q)
Էստոնիա			V		Միավորներ	DC ¹⁰³
Նորվեգիա		V			NDC	DC
Շվեդիա	V	V			NDC+DC	DC (q)
Նիդերլանդներ	V					DB (q)
ՌԴ	V		V		Միավորներ	DC
Բելառուս ^{104, 105}	V		V			
Վրաստան	V					DC (q)
<i>2020 թվականից կենսաթոշակի անցածների համար</i>						
Զիչի		V		V	DB	DC
Էստոնիա	V				DB/Միավորներ	DC
Նորվեգիա	V	V			DB	DC
Զինասրահ			V		NDC+DC	
Վրաստան ¹⁰⁶	V					

Շվեդիայում երաշխիքային կենսաթոշակի դիմելու իրավունք ստանալու համար պահանջվում է 3 տարվա բնակություն, իսկ ամբողջական նպաստի համար՝ 40 տարվա: Երաշխիքային կենսաթոշակը կախված է կենսաթոշակատուի եկամտից, և 1938 թվականից հետո ծնված միայնակ կենսաթոշակատուի համար 2020 թ. դրությամբ այն կազմել է 103161 SEK (10083 ԱՄՆ դոլար) կամ համախառն միջին եկամտի 22,2%-ը: Երաշխիքային կենսաթոշակն առաջին 59598 SEK (5825 ԱՄՆ դոլար) եկամտի դեպքում 100%-ի չափով պահվում է եկամտային կենսաթոշակից, դրանից հետո՝ 48%-ի չափով (սահմանը միջին եկամտի 13%-ն է): Երբ եկամտից կախված կենսաթոշակը գերա-

¹⁰² Այս և հետագոտության մյուս հատվածներում երկրների հետ կապված տվյալները տե՛ս <https://www.oecd.org/els/public-pensions/oecd-pensions-at-a-glance-19991363.htm>
 Բոլոր երկրներում համակարգերի բաղադրիչները վերաբերում են 22 տարին լրացած, անգամ աշխատաշուկա մուտք գործող լրիվ դրույքով զբաղված աշխատողներին:
¹⁰³ 2021 թ. հունվարի 1-ից դարձել է կամավոր:
¹⁰⁴ <https://myfin.by/wiki/term/pensiya-po-vozrastu-v-belarusi>
¹⁰⁵ https://kodeksy-by.com/zakon_rb_o_pensionnom_obespechenii/11.htm
¹⁰⁶ <https://matsne.gov.ge/ru/document/view/27946>

զանցում է 150348 SEK-ը (միջին եկամտի 31%-ը՝ 14696 ԱՄՆ դոլար), երաշխիքային կենսաթոշակը դադարեցվում է: Նորվեգիան և Շվեդիան նոր օրենսդրությամբ աստիճանաբար հրաժարվում են հիմնական կենսաթոշակից՝ այն փոխարինելով թիրախավորված կենսաթոշակով՝ կախված կենսաթոշակառուի եկամտից:

Նիդեռլանդներում, Վրաստանում և Բելառուսում համակարգը ունիվերսալ է, և նվազագույն բնակության պահանջը բացակայում է: Նիդեռլանդներում հիմնական կենսաթոշակը միայնակ անձի համար 2020 թ. դրությամբ ամսական 1230.24 եվրո է: Յուրաքանչյուրին հատկացվում է նաև 72.04 եվրո՝ որպես լրացուցիչ արձակուրդային վճար: Միայնակ կենսաթոշակառուների տրամադրվում է 1 302,28 եվրո, իսկ զույգերին՝ 1770.76 եվրո: Կենսաթոշակի մեծությունը կազմում է համախառն միջին աշխատավարձի 29.2%-ը և կախված է նվազագույն աշխատավարձից, որը վերանայվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ: Վրաստանում նպաստի դրույքաչափը միասնական է՝ մինչև 70 տարեկան կենսաթոշակառուների համար 2021 թ. տվյալներով 240 լարի է (72 ԱՄՆ դոլար), իսկ 70 և բարձր տարիքի կենսաթոշակառուների համար՝ 275 լարի (83 ԱՄՆ դոլար)¹⁰⁷: Բելառուսում երաշխավորված նվազագույն կենսաթոշակ ստանում են այն անձինք, որոնք այլ նպաստ չեն ստանում: Այն կազմում է վերջին երկու քառորդներում շնչին ընկնող կենսանվազագույնի (2022 թ. օգոստոսին՝ 328.5 ռուբլի) առավելագույն մեծության 25%-ը (82.13 ռուբլի)¹⁰⁸:

Վերաբաշխողական համակարգի տարատեսակներից է թիրախավորված նպաստի սխեման, որը կիրառում են գրեթե բոլոր երկրները: Այստեղ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես այն երկրների փորձը, որտեղ թիրախ են հանդիսանում միայն լրիվ հաստիքով աշխատող ցածր եկամուտ ունեցողները (միջին եկամտի 30%-ի չափով): Նման սխեմաներ կիրառում են համեմատվող երկրներից Չիլի, Դանիան, Նորվեգիան և Շվեդիան:

Չիլիում հիմնական համերաշխության կենսաթոշակը (Basic Solidarity Pension՝ PBS) նման է քաղաքացիության վրա հիմնված կենսաթոշակի սխեմային, սակայն թիրախավորում է 65 տարին լրացած ամենաաղքատ բնակչության 60%-ին: Սխեմայի շահառու կարող են հանդիսանալ առնվազն 20 տարի բնակություն ունեցող և դիմումին նախորդող 5 տարիների առնվազն 4 տարին Չիլիում բնակվող անձինք: Այն հաստատուն մեծություն է և կախված

¹⁰⁷ <https://www.agenda.ge/en/news/2019/13>

<https://matsne.gov.ge/ru/document/view/27946?publication=29>

¹⁰⁸ <https://ktzszmoik.gov.by/pereraschyoty-pensij/#:~:text=%D0%92%20%D1%81%D0%BE%D0%BE%D1%82%D0%B2%D0%B8%D0%B8%20%D1%81%20%D0%A3%D0%BA%D0%B0%D0%B7%D0%BE%D0%BC%20%D0%9F%D1%80%D0%B5%D0%B7%D0%B8%D0%B4%D0%B5%D0%BD%D1%82%D0%B0,%D1%80%D0%B5%D1%81%D0%BF%D1%83%D0%B1%D0%BB%D0%B8%D0%BA%D0%B5%20%E2%80%93%201310%2C01%20%D1%80%D1%83%D0%B1.>

է կենսաթոշակատուի տարիքից՝ տատանվում է 199-238,5 ԱՄՆ դոլարի սահմաններում:

Լրացուցիչ կենսաթոշակ՝ APS (Solidarity Pension Payment) է հասկացվում առավելագույն բարեկեցության կենսաթոշակից (PMAS) ցածր սահմանված հատկացումներով կենսաթոշակի դեպքում: Առավելագույն համերաշխության կենսաթոշակը նույնպես կախված է կենսաթոշակատուի տարիքից՝ տատանվում է 587-704,8 ԱՄՆ դոլարի սահմաններում: Չիլիում թիրախավորված կենսաթոշակի մեծությունը 2020 թ. տվյալներով կազմել է համախառն միջին եկամտի 16.5%-ը:

Դանիայում թիրախավորված կենսաթոշակի մեծությունը կախված է կենսաթոշակատուի եկամտից և ամուսնական կարգավիճակից: Միայնակ կենսաթոշակատուների համար այն հավասար է ամսական 7122 DKK-ի (974.50 ԱՄՆ դոլար), իսկ ամուսնացած կամ համատեղ ապրող կենսաթոշակատուների համար՝ 3.576 DKK-ի (490 ԱՄՆ դոլար): Ընդ որում, ամուսնու/կնոջ կենսաթոշակատու լինելու դեպքում լրացուցիչ նպաստը նվազեցվում է 177700 DKK-ն (243145 ԱՄՆ դոլար) գերազանցող նրանց համախառն անձնական եկամտի 16%-ի չափով: Եթե ամուսինը/կինը կենսաթոշակատու չէ, ապա նվազեցումը կատարվում է 32%-ի չափով: Թիրախավորված կենսաթոշակ ստանալու համար կենսաթոշակատուի իրացվելի ակտիվների արժեքը չպետք է գերազանցի 89800 DKK-ն (12287.34 ԱՄՆ դոլար): Տարեկան 122004 DKK-ն (16693.82 ԱՄՆ դոլար) աշխատանքային եկամուտը՝ եկամտից կախված, լրացուցիչ կենսաթոշակի հաշվարկման ժամանակ հաշվի չի առնվում, որի շնորհիվ պետությունը խրախուսում է զբաղվածությունը կենսաթոշակային տարիքում: Թիրախավորված կենսաթոշակի մեծությունը կազմում է համախառն միջին աշխատավարձի 19.6%-ը:

Շվեդիայում ցածր աշխատավարձով աշխատողները կարող են ստանալ նաև եկամտային կենսաթոշակի հավելում, որի մեծությունը կախված է եկամտով պայմանավորված կենսաթոշակի մեծությունից և կենսաթոշակի համար հաշվեգրվող եկամուտ վաստակելու տարիների քանակից: Եթե կենսաթոշակատուի եկամտային կենսաթոշակը մինչև հարկումը գերազանցում է ամսական 17420 SEK-ը (1702.75 ԱՄՆ դոլար) և փոքր է 9223 SEK-ից (1702.75 ԱՄՆ դոլար), ապա թիրախավորված կենսաթոշակ չի ստանում: Կենսաթոշակը կարելի է ստանալ նաև աշխատելու ընթացքում: Կենսաթոշակի համար հաշվեգրվող եկամուտ վաստակելու տարիները պետք է տատանվեն 35-40 տարիների միջակայքում: Եկամտային կենսաթոշակի հավելումն առավելագույնը ամսական 600 SEK է (58,65 ԱՄՆ դոլար)¹⁰⁹:

Հին և նոր օրենսդրության համաձայն՝ Նորվեգիայում պակաս տարիների բնակություն և/կամ ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներին երաշխա-

¹⁰⁹ <https://www.pensionsmyndigheten.se/other-languages/english-engelska/english-engelska/income-pension-complement>

վորված կենսաթոշակ ապահովելու համար գործում է հատուկ լրացում: Այն կախված է կենսաթոշակատուի հարստությունից և Նորվեգիայում ու դրանից դուրս ստացված ողջ եկամտից: Հաշվի են առնվում նաև զուգընկերոջ կամ ամուսնու եկամուտը և կենսաթոշակատուի ակտիվները: Միայնակ և մինչև 67 տարեկան զուգընկեր կամ ամուսին ունեցող կենսաթոշակատուների լրացուցիչ կենսաթոշակի մեծությունը հավասար է բարձր մակարդակի նվազագույն կենսաթոշակին, իսկ լրիվ կենսաթոշակ ստացող ամուսնու կամ զուգընկերոջ առկայության դեպքում լրացուցիչ կենսաթոշակի մեծությունը սահմանվում է սովորական մակարդակի վրա այնպես, որ ամուսինների գումարային կենսաթոշակը առնվազն հավասար լինի նվազագույն կենսաթոշակի կրկնապատիկին¹¹⁰:

Համեմատվող երկրներից Էստոնիայում, ՌԴ-ում, Չինաստանում և Բելառուսում գործում է հատկացումների վրա հիմնված հիմնական կենսաթոշակի բաղադրիչը, և միայն Չիլիում է կիրառվում նվազագույն կենսաթոշակի համակարգը:

Էստոնիայում և Ռուսաստանում հիմնական կենսաթոշակի դրույքաչափը միասնական է: Էստոնիայում այն կազմում է ամսական 215.51 եվրո և վճարվում է միայն եկամտից կախված կենսաթոշակի հետ միասին: Կազմում է համախառն միջին եկամտի 15.5%-ը: Էստոնիայում համակարգին նախնական անդամակցության և ամբողջական նպաստ ստանալու համար անհրաժեշտ է 15 տարի հատկացումներ կատարել: Ռուսաստանում կենսաթոշակը կազմում է ամսական 5686.25 ռուբլի, իսկ 80 տարեկան և բարձր կենսաթոշակատուները իրավասու են կրկնապատկել կենսաթոշակի մեծությունը: Համակարգին անդամակցելու համար պահանջվում է հատկացումներ կատարել 10 տարի, իսկ ամբողջական թոշակի համար՝ 40 տարի:

Բելառուսում հիմնական կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու համար տղամարդկանցից պահանջվում է ոչ պակաս, քան 25 տարվա, իսկ կանանցից՝ ոչ պակաս, քան 20 տարվա աշխատանքային ստաժ՝ մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը: Կենսաթոշակի մեծությունը կախված է աշխատանքային գործունեության ընթացքում եկամուտների մեծությունից, այդ իսկ պատճառով տարբեր ոլորտներում տարբեր է: Այն հավասար է միջին ամսական աշխատավարձի (2022 թ. օգոստոսին կազմել է 1310.01 ռուբլի) 55%-ին, սակայն չպետք է պակաս լինի նվազագույն կենսաթոշակից: Ընդ որում, տղամարդկանց համար 25 տարին, կանանց համար 20 տարին գերազանցող աշխատանքային ստաժի դեպքում յուրաքանչյուր տարվա համար հիմնական կենսաթոշակն ավելանում է միջին ամսական աշխատավարձի 1%-ի չափով, սակայն ոչ պակաս, քան նվազագույն կենսաթոշակի 1%-ը: Տղամարդկանց համար 35 տարին (45 տարին), կանանց համար 30 տարին (40 տարին) գերազանցող աշխատանքային ստաժի և կենսաթոշակային տարի-

¹¹⁰ <https://www.nav.no/alderspension#hvor-mye>

քը լրանալու դեպքում յուրաքանչյուր լրացուցիչ տարվա (տղամարդկանց դեպքում աշխատանքային ստաժի 26-րդ, կանանց դեպքում՝ 21-րդ տարուց սկսած յուրաքանչյուր տարվա համար) համար հիմնական կենսաթոշակն աճում է միջին ամսական աշխատավարձի 1%-ի չափով, սակայն ոչ պակաս, քան հանրապետությունում գործող միջին աշխատավարձի 0,7%-ը:

Չինաստանում հիմնական կենսաթոշակի սխեման բաղկացած է երկու մասից. *Քաղաքային աշխատողների կենսաթոշակային և Գյուղական և քաղաքային աշխատողների կենսաթոշակային սխեմաներից*¹¹¹: Քաղաքային աշխատողների բաղադրիչը պարտադիր է բոլոր քաղաքային աշխատողների համար: Գործատուները հատկացումներ կատարում են աշխատավարձի 16%-ի (տարբեր է ըստ շրջանների), իսկ աշխատողները՝ 8%-ի չափով: Քաղաքային աշխատողների համար նպաստի մեծությունը մասամբ հատկացումների վրա է հիմնված: Սխեման ունի կանխավճարային և ամբողջությամբ ֆինանսավորվող անհատական հաշիվների բաղադրիչ՝ յուրաքանչյուր աշխատողի համար: Երկու դեպքում էլ նվազագույնը 15 տարվա հատկացումներ են պահանջվում՝ նպաստը ստանալու համար: Հիմնական կենսաթոշակը հավասար է անհատական ինդեքսավորված աշխատավարձի և նահանգի միջին եկամտի միջինի 1%-ին:

Երկրորդ բաղադրիչով քաղաքացիներն ազատ են՝ ընտրելու հատկացումների մեծությունը: Մասնակիցների հատկացումների և տեղական ինքնակառավարման մարմինների սուբսիդիաների հանրագումարը հաշվեգրվում է անհատական հաշիվներին: Հատկացումների վերին և ստորին սահմանները տարբերվում են ըստ շրջանների՝ տատանվելով տարեկան 100 յուանից մինչև մի քանի հազար յուան: Պարտադիր 15 տարվա հատկացումներ են պահանջվում, իսկ հիմնական կենսաթոշակը բաղկացած է հիմնական կենսաթոշակային հաշվից և անհատական հաշվից:

Չիլիում գործում է նվազագույն կենսաթոշակի համակարգը: Երաշխավորված նվազագույն ծերության կենսաթոշակ ստանալու համար պահանջվում են 20 տարվա հատկացումներ և նվազագույն ծերության կենսաթոշակից ցածր համախառն եկամուտ: Երաշխավորված նվազագույն նպաստը 70 տարեկանից ցածր կենսաթոշակառուների համար ամսական 200 ԱՄՆ դոլար է, 70-75 տարեկանների համար՝ 219 ԱՄՆ դոլար, 75-ից բարձր տարիքի կենսաթոշակառուների համար՝ 233.6 ԱՄՆ դոլար: Մինչև 2023 թվականը Չիլիում համակարգը փոխարինվելու է ծերության համերաշխության նպաստի համալրման սխեմայով (APS): Մինչև փոխարինումը այս երկու համակարգերի միջև ընտրության հնարավորություն կընձեռվի մինչև 2008 թվականի հուլիսի 1-ը երաշխավորված նվազագույն կենսաթոշակ ստացածներին և 2008 թվականի հուլիսի 1-ին 50 կամ բարձր տարիքի անձանց: Չիլիում

¹¹¹ <http://www.iopsweb.org/resources/38766497.pdf>

երաշխավորված նվազագույն կենսաթոշակը կազմում է համախառն միջին եկամտի 17.7%-ը:

Կենսաթոշակային համակարգի երկրորդ մակարդակը

Կենսաթոշակային համակարգի երկրորդ մակարդակն ունի «ապահովագրող» նշանակություն: Դրա նպատակն է ոչ միայն կանխել կենսաթոշակատուների աղքատությունը, այլև կենսաթոշակի անցնելուց հետո կենսաթոշակատուներին ապահովել մինչև կենսաթոշակի անցնելը նրանց եկամտին համարժեք եկամտով: Եկամուտների հետ կապված ապահովագրական մակարդակի տարատեսակներն են՝ սահմանված կենսաթոշակի, սահմանված հատկացումների, միավորների և պայմանական հաշիվների սխեմաները, որոնք միմյանցից տարբերվում են ըստ տարեկան հաշվեգրման դրույքաչափի, որը ցույց է տալիս, թե կենսաթոշակային սխեմայի կողմից «ծածկվող» եկամտի քանի տոկոսն է հաշվեգրվում կենսաթոշակային հիմնադրամին: Կենսաթոշակային համակարգերի մեծամասնության դեպքում հատկացումները հաշվարկվում են եկամուտների միայն որոշակի մասի նկատմամբ: Այս վերին շեմերի գործողության առավելությունն այն է, որ ավելի բարձր եկամուտ ունեցող աշխատողները կարող են կուտակել անհատական խնայողություններ, եթե ցանկանում են հասնել փոխարինման ավելի բարձր նորմայի: Ընդ որում, այս մակարդակի պարտադիր կենսաթոշակային սխեմաները կարող են լինել պետական և մասնավոր:

Աշխարհում գրեթե բոլոր երկրները կիրառում են երկրորդ մակարդակի պարտադիր/քվազի պարտադիր պետական և/կամ մասնավոր կենսաթոշակային համակարգի տիպերը (համեմատվող երկրներից բացառություն է կազմում Բելառուսը, որտեղ համակարգը միայն կամավոր է և սկսել է գործել 2022 թ. հոկտեմբերի 1-ից): Համեմատվող երկրներից Դանիայում և Շվեդիայում՝ սահմանված հատկացումների, Նիդեռլանդներում՝ սահմանված նպաստի մասնավոր համակարգը *քվազի* պարտադիր է, որը նշանակում է, որ այդ երկրներում առկա է համակարգի՝ ունիվերսալին մոտ ծածկույթ¹¹²: Քվազի պարտադիր մասնավոր սխեմաների դեպքում թեև գործատուներն իրենց աշխատողներին կենսաթոշակային սխեմային անդամակցության առաջարկություն անելու պարտավորություն չունեն, այնուամենայնիվ, կոլեկտիվ համաձայնագրերը ենթադրում են, որ աշխատողների գրեթե 90%-ն անդամակցում է այդ համակարգերին:

Պետական պարտադիր սահմանված կենսաթոշակի համակարգը (DB) գործող օրենսդրությամբ կիրառվում է համեմատվող երկրներից Չիլիում, Էստոնիայում և Նորվեգիայում և միայն ընթացիկ ժամանակում կենսաթոշակի անցնող անձանց համար, սակայն նոր օրենսդրությամբ այն դադարել է

¹¹² 2022 թ. մարտի 30-ին Նիդեռլանդների Կառավարությունը օրենսդրական բարեփոխումների փաթեթ է առաջարկել օրենսդրին՝ մինչև 2027 թ. հունվարի 1-ը անցում իրականացնել սահմանված կենսաթոշակի համակարգից դեպի սահմանված հատկացումների համակարգ:

գործել 2018 թ. առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող 22 տարեկան անձանց համար:

Սահմանված կենսաթոշակի համակարգի կիրառության սահմանափակությունը տարբեր երկրներում պայմանավորված է առաջին հերթին բնակչության կյանքի տևողության, կենսաթոշակառուների կյանքի սպասվող տևողության երկարացմամբ, ինքնագրավածության աճով և կենսաթոշակային հատկացումների կրճատմամբ, որը մեծացնում է պետության բեռը և կրճատում կենսաթոշակը:

Համեմատվող բոլոր երկրները համադրում են պետական և մասնավոր պարտադիր հատկացումների բաղադրիչները, բացառությամբ՝ Չիլիի (սոր օրենսդրությամբ միայն մասնավոր է), Նիդեռլանդների (միայն մասնավոր է) և Բելառուսի (սկսել է գործել 2022 թ. հոկտեմբերի 1-ից): Վրաստանում այս բաղադրիչը մինչև 60 տարեկան անձանց համար է պարտադիր, մյուսների համար՝ կամավոր, սակայն 40 տարին լրացած լինելու դեպքում մասնակիցը կարող է հրաժարվել անդամակցությունից¹¹³:

Կենսաթոշակային համակարգի հիմնական բնութագրիչները համեմատվող երկրներում

ա. Կենսաթոշակային եկամտի մեծությունը

Նպաստը հաշվելու համար հաշվարկվող եկամուտների մեծությունը տարբերվում է ըստ երկրների: Կան երկրներ, որտեղ հաշվեգրման համար հաշվի է առնվում ողջ աշխատանքային գործունեության ընթացքում ստացված միջին եկամուտը, որոշ երկրներում՝ լավագույն 24, 25, 35 և 40 կամ վերջին 10 և 20 տարիների եկամուտները: Բոլոր համեմատվող երկրներում¹¹⁴ հաշվի են առնում ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում ստացված միջին եկամուտը, բացառությամբ Բելառուսի, որտեղ հաշվի է առնվում վերջին 28 տարիների եկամուտը, և Նորվեգիայի, որտեղ, հին օրենսդրության համաձայն, հաշվի է առնվում լավագույն 20 տարիների եկամուտը, մինչդեռ նոր օրենսդրությամբ՝ մինչև 75 տարեկանը բոլոր աշխատած տարիները¹¹⁵: Շվեդիայում կենսաթոշակային եկամուտը հավասար է համախառն եկամտից հանած աշխատողի կենսաթոշակային հատկացումները պայմանական հաշվիների համակարգին և սահմանված հատկացումների համակարգին (համախառն եկամտի 7%-ը): Ընդ որում, մինչև 1938 թվականը ծնվածների համար լրացուցիչ կենսաթոշակը վճարվում է լավագույն 15 եկամտային տարիների համար:

¹¹³ <https://matsne.gov.ge/ru/document/view/428012?publication=2>

¹¹⁴ Չիլիում համակարգը բացակայում է, ուստի այդ երկրի համար ցուցանիշ չի հաշվարկվում, իսկ Դանիայում սխեմայի համար հատկացումների հիմք են հանդիսանում ամսական աշխատած ժամերը և դրանք հաստատուն մեծություն են:

¹¹⁵ Մինչև 1954 թվականը ծնվածների համար:

բ. Նախկին եկամուտների վերահաշվարկի մեխանիզմը

Որոշ երկրներ, անկախ ընդունված համակարգից, կիրառում են նախկին եկամուտների վերահաշվարկի դրույքաչափը՝ հաշվի առնելով սոցիալական հատկացումներ կատարելու և կենսաթոշակ ստանալու միջև ընկած ժամանակահատվածում կենսամակարդակի փոփոխությունները: Օրինակ, Էստոնիան, Նորվեգիան, Շվեդիան և Բելառուսն իրականացնում են վերահաշվարկ՝ ըստ միջին աշխատավարձի աճի, իսկ Նիդերլանդները՝ ըստ գնաճի տեմպի, որի հետևանքով իրական աշխատավարձի աճը կարող է բացասաբար անդրադառնալ կենսաթոշակի փոխարինման նորմայի վրա և բարձրացնել ֆինանսական համակարգի զգայունությունն իրական աշխատավարձի աճի նկատմամբ: Բելառուսում աշխատանքային կենսաթոշակների վերահաշվարկը կատարվում է կենսաթոշակառուի՝ նախորդ ժամանակում վճարված կենսաթոշակի հաշվարկի հիմք հանդիսացող փաստացի աշխատավարձի ճշգրտման միջոցով՝ ավելացրած դրա 10%-ը¹¹⁶: Օրինակ, ըստ ՏՀԶԿ հաշվարկների՝ եթե իրական աշխատավարձն աճի 2%-ով, իսկ գնաճի տեմպը՝ 2,5%-ով, ապա ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում գների վերահաշվարկի դեպքում կենսաթոշակի մեծությունը 40%-ով ավելի ցածր կլինի, քան ամբողջ տնտեսությունում միջին եկամտի փոփոխությունները հաշվի առնելու դեպքում¹¹⁷:

գ. Կենսաթոշակի ինդեքսավորման մեխանիզմը

Տարբեր երկրներում ընթացիկ կենսաթոշակային վճարները նաև ինդեքսավորվում են՝ կախված տնտեսական գործոններից (գնաճի և/կամ միջին աշխատավարձի և/կամ տնտեսական աճի տեմպից): Կենսաթոշակների ինդեքսավորման գործընթացի կառավարման մեխանիզմները հիմնաբար ազդեցություն ունեն կենսաթոշակային համակարգերի երկարաժամկետ համարժեքության և պետական համակարգերի ֆինանսական կայունության ապահովման գործում: Օրինակ, Չիլին (թիրախավորված և լրացուցիչ համերաշխության կենսաթոշակները) ինդեքսավորում է ըստ գնաճի տեմպի (կախված ֆինանսական կայունությունից), Նորվեգիան և Չինաստանը՝ ըստ անվանական աշխատավարձի և գների աճի, Շվեդիան (պայմանական հաշիվների համակարգը) և Դանիան (պետական կենսաթոշակը)՝ ըստ միջին աշխատավարձի աճի, Նիդերլանդները՝ ըստ նվազագույն աշխատավարձի աճի, Վրաստանը՝ ըստ գնաճի տեմպի և/կամ տնտեսական աճի տեմպի: Ընդ որում, Դանիայում հաշվի են առնում նախորդող երկու տարիների աշ-

¹¹⁶ <https://ktszszmoik.gov.by/pereraschyoty-pensij/#:~:text=%D0%92%20%D1%81%D0%BE%D0%BE%D1%82%D0%B2%D0%B5%D1%82%D1%81%D1%82%D0%B2%D0%B8%D0%B8%20%D1%81%20%D0%A3%D0%BA%D0%B0%D0%B7%D0%BE%D0%BC%20%D0%9F%D1%80%D0%B5%D0%B7%D0%B8%D0%B4%D0%B5%D0%BD%D1%82%D0%B0,%D1%80%D0%B5%D1%81%D0%BF%D1%83%D0%B1%D0%BB%D0%B8%D0%BA%D0%B5%20%E2%80%93%201310%2C01%20%D1%80%D1%83%D0%B1>

¹¹⁷ https://www.oecd-ilibrary.org/docserver/pension_glance-2005-en.pdf?expires=1659947196&id=id&accname=guest&checksum=BA53DBF793261E206C3C7E7156DF095F, p. 33.

խատավարձի աճը: Շվեդիայում հիմնական երաշխավորված կենսաթոշակն ինդեքսավորվում է ըստ գնաճի տեմպի: Սահմանված հատկացումների սխեմայի դեպքում Դանիայում ինդեքսավորումն իրականացվում է ըստ գնաճի տեմպի: Էստոնիայում եկամուտների հետ կապված և թիրախավորված կենսաթոշակի սխեմաների դեպքում կենսաթոշակն ինդեքսավորվում է յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսին ըստ ՄԳԻ աճի 20%-ի և կենսաթոշակային մուտքերի 80%-ի: Ընդ որում, եթե ինդեքսը փոքր է 1-ից, ապա ինդեքսավորում չի իրականացվում: Սակայն, որոշ դեպքերում կառավարության որոշմամբ 1-ից փոքր արժեքով ինդեքսավորում կարող է իրականացվել, որը նշանակում է, որ Էստոնիայում ինդեքսավորումը մասամբ ավտոմատ է: Եթե նախորդող ժամանակում ինդեքսը 1-ից փոքր է եղել, և կենսաթոշակները չեն նվազել կամ եթե դրանք ինդեքսավորվել են ավելի ցածր ինդեքսով, քան եղել է դրա հաշվարկված արժեքը, ապա հաջորդող 5 տարիների համար նոր ինդեքս հաստատելու ժամանակ կառավարությունը պետք է նվազեցնի կամ բարձրացնի ինդեքսը¹¹⁸:

2021 թ. հունվարից Վրաստանում ուժի մեջ է մտել կենսաթոշակների ինդեքսավորման կանոնը¹¹⁹: Դա նշանակում է, որ կենսաթոշակը պետք է յուրաքանչյուր տարի աճի՝ կախված տնտեսական գործոններից: Մինչև 70 տարեկան քաղաքացիների համար կենսաթոշակն աճելու է ըստ ինֆլյացիայի տեմպի, իսկ 70 տարեկանից բարձր քաղաքացիների համար՝ ըստ ինֆլյացիայի տեմպի և տնտեսական աճի 80%-ի:

ՌԴ-ում 2019-2024 թթ. ընթացքում ապահովագրական կենսաթոշակի, դրա հաստատուն բաղադրիչի մեծությունը և կենսաթոշակային գործակցի արժեքն ինդեքսավորվում և ինդեքսավորվելու են յուրաքանչյուր տարի: Այսպես, 2022 թ. հունվարի 1-ից ապահովագրական կենսաթոշակի հաստատուն բաղադրիչի մեծությունը կազմում է 6401,1 ռուբլի, իսկ կենսաթոշակային գործակցի արժեքը՝ 104.69 ռուբլի: Ընդ որում, 2023 թ. հունվարից դրանք կկազմեն համապատասխանաբար՝ 6759,56 ռուբլի և 110.55 ռուբլի, իսկ 2024 թ. հունվարից՝ 7131.34 ռուբլի և 116.63 ռուբլի: 2022 թ. հունվարի 1-ից ապահովագրական կենսաթոշակն ինդեքսավորվել է 5.9%-ով, իսկ 2023 թ. պլանավորվում է այն ինդեքսավորել 5.6, 2024 թ.՝ 5.5%-ով¹²⁰:

դ. Կենսաթոշակային համակարգի հարմարեցման մեխանիզմները

Ժողովրդագրական, տնտեսական և ֆինանսական իրավիճակի փոփոխություններն ազդում են կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության և համարժեքության վրա, ուստի քաղաքականություն մշակողները կարող են հարմարեցնել համակարգի փոփոխականները: Հարմարեցումը կարող է տեղի ունենալ դիսկրետ (իրավիճակի փոփոխության հետ

¹¹⁸ <https://www.pensionikeskus.ee/en/i-pillar/state-pension/>

¹¹⁹ <https://www.newsgeorgia.ge/v-gruzii-s-janvarja-2022-goda-povysjat-pensii>

¹²⁰ <https://www.garant.ru/article/1521905/>

պարբերաբար օրենսդրական փոփոխություններ) կամ ինքնավար (սահմանել կենսաթոշակային փոփոխականների փոփոխության կանոնները) եղանակով: Երկրորդ եղանակն ավելի արդյունավետ է, քանի որ, ժողովրդագրական, տնտեսական և ֆինանսական ցուցանիշների փոփոխությունից կախված, ավտոմատ փոփոխվում են կենսաթոշակի մեծությունը, հատկացումների չափը և կենսաթոշակային տարիքը: Ավտոմատ հարմարեցման համակարգի ցուցանիշները կարող են լինել՝ ժողովրդագրական՝ կյանքի սպասվող տևողությունը որոշակի տարիքում, տնտեսական՝ աշխատավարձի կամ աշխատավարձի ֆոնդի աճը, ֆինանսական՝ ֆինանսավորման հաշվեկշիռը կամ դրանց որոշակի համադրությունները:

Համեմատվող երկրներից Էստոնիան, Նիդեռլանդները և Շվեդիան ունեն ամբողջովին ավտոմատ հարմարեցման մեխանիզմ՝ կենսաթոշակային տարիքը կապելով կյանքի սպասվող տևողության հետ: Դանիայում հարմարեցումը նույնպես կատարվում է ըստ կյանքի սպասվող տևողության, սակայն համակարգը կիսավտոմատ է, և յուրաքանչյուր ակտիվացման համար պահանջվում է պետության հավանությունը: Շվեդիայի հարմարեցման մեխանիզմը համարվում է ամենաարդյունավետներից մեկը, քանի որ համադրում է պայմանական հատկացումների բաղադրիչի հարմարեցումը ֆինանսական հաշվեկշռման մեխանիզմի հետ և նախատեսում է հարմարեցում կենսաթոշակային տարիքի և կյանքի սպասվող տևողության միջև:

Կարծիք է հայտնվել, որ արդի կարգավորումներով՝ բազմաթիվ սոցիալական երաշխիքների, ապօրինի պարզևատրումների պարագայում շատ հեղեղելու է պաշտոնատար անձանց պատասխանատվության մեխանիզմները: Դրանք սահմանափակվում են սուսկ **կարգապահական տույժերով** (որոնք հիմնականում ժամանակի ընթացքում վերացվում են և որևէ ազդեցություն չեն ունենում պաշտոնատար անձանց պատասխանատվության բարձրացման վրա), կամ էլ «Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կողմից օրենսդրությունը խախտող անձինք կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով» և «Քաղաքացիական ծառայողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով կարող է կիրառվել նյութական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված չափով» **մերկապարանոց ձևակերպումներով**, քանզի այդպիսի պատասխանատվության կոնկրետ մեխանիզմներ ՀՀ օրենսդրության մեջ սահմանված չեն: Այդպիսի սահմանումները արգելափակում են ՀՀ պաշտոնատար անձանց նկատմամբ ոչ պատշաճ վարչարարության արդյունքում ՀՀ քաղաքացիներին ու իրավաբանական անձանց հասցված վնասների և այդ կապակցությամբ «Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված բողոքների վարչական վարույթների ոչ պատշաճ կատարման համար պետական պաշտոն զբաղեցնող անձանց

¹⁴⁷ Տե՛ս Տարոն Աճեմօղլու, Ջեյն Ա. Ռոբինսոն, «Ինչո՞ւ են ձախողվում պետությունները», էջ 116, 2018, Եր., «Անտարես» հրատարակչություն:

վարչական պատասխանատվության, ինչպես նաև «ՀՀ քաղաքացիական օրենսգրքով» և ՀՀ դատարանների որոշումներով նյութական պատասխանատվություն՝ վնասի փոխհատուցում, կիրառումը:

Այդպիսի իրավիճակը հանգեցնում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց անպատասխանատու աշխատանքին ու կոռուպցիոն հակվածությամբ: Հետևապես, խիստ անհրաժեշտ է, որպեսզի հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության կենսագործման շրջանակներում.

- մշակվի և ընդունվի «Մասնագիտական սխալի ապահովագրության մասին» ՀՀ օրենքը,
- համապատասխան փոփոխություններ կատարվեն «Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում՝ վարչական վարույթի ժամանակ ՀՀ քաղաքացիների կողմից կատարված ծախսերը փոխհատուցելու և հենց պաշտոնատար անձանց կողմից այդ փոխհատուցումը տալու մասին,
- համապատասխան փոփոխություններ կատարվեն հանրային ծառայության մասին նորմատիվ իրավական ակտերում՝ պաշտոնատար անձանց ոչ պատշաճ գործունեության համար հստակ վարչական ու քրեական պատասխանատվության ենթարկելու մասին և այլն:

2. Արդյո՞ք ապահովվում է պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության չափերի հիմնավորված տարբերակումը:

Չորս փորձագետներն էլ համակարծիք են, որ պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության չափերի տարբերակումը հիմնավորված չէ: Մեկ փորձագետ կարծում է, որ գործող օրենքով տարբերակում կա, որը նաև ունի տրամաբանություն և հիմնավորում, այսինքն՝ օրենքով կարգավորվում է, թե որ պաշտոնը ինչ դասային աստիճանի պարագայում որքան աշխատավարձ պետք է ստանա: Տրամաբանված տարանջատում և հիմնավորումներ առկա են, սակայն գործակիցները ցածր են, և ներկայումս կա վերանայման անհրաժեշտություն:

Մեկ այլ փորձագետ արձանագրել է, որ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքի վարձատրության չափը որոշվում է հետևյալ նորմատիվ իրավական փաստաթղթերով.

- 1) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-157-Ն, ընդունված 12.12.2013 թ.,
- 2) «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-205-Ն, ընդունված 23.03.2018 թ.,
- 3) «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-206-Ն, ընդունված 23.03.2018 թ.,

- 4) Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թ. հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարզևատրման կարգը հաստատելու մասին» N 1510-Ն որոշում,
- 5) Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թ. դեկտեմբերի 18-ի «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների փոփոխության նպատակով՝ ըստ մասնագիտությունների և տարածքների աշխատանքի շուկայի վերլուծության իրականացման կարգը և այդ վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացնելու ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թ.դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1420-Ն որոշում:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերով հիմնականում ապահովվում է պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքի տարբերակումը՝ ըստ աշխատանքային փորձի, հմտությունների, դասային աստիճանների, ապահովվում է պաշտոնեական դիրքի բնականոն աճի խթանումը, հաշվի են առնվում շարունակական կրթության պահանջները: Ըստ այդմ, հաշվարկված գործակիցները հիմնականում կարելի է համարել պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառնությունների, իրավասությունների, պարտականությունների և ծանրաբեռնվածության համար նախատեսված աշխատանքի վարձատրության համեմատաբար արդարացի համակարգ: Այդուհանդերձ, փորձագետը կարծում է, որ այդ համակարգը ներկա սոցիալ-տնտեսական պայմաններին ու մարտահրավերներին համահունչ չէ և ներկայացրել է հետևյալ հաշվարկները՝

- այսպես, նշված համակարգով սահմանված գործակիցներին համապատասխան, ըստ Iravaban.net-ի հաշվարկների¹⁴⁸, ՀՀ վարչապետի աշխատավարձը կազմում է 1 միլիոն 256 հազար 660 դրամ, ՀՀ նախագահինը՝ 1 միլիոն 322 հազար 800 դրամ, ՀՀ Ազգային ժողովի նախագահինը՝ 1 միլիոն 190 հազար 520 դրամ, իսկ փոխվարչապետի աշխատավարձը՝ 1 միլիոն 25 հազար 170 դրամ:
- իր փորձագիտական գնահատմամբ, համաձայն համապատասխան իրավակարգավորման՝ ՀՀ վարչապետի աշխատավարձը կազմում է 2 միլիոն 513 հազար 520 դրամ, ՀՀ նախագահինը՝ 2 միլիոն 645 հա-

¹⁴⁸ Աղբյուրը՝ <https://iravaban.net/392667.html>, ՀՀ վարչապետի, նախագահի, ԱԺ նախագահի և փոխվարչապետի աշխատավարձը՝ օրենքի համաձայն:

զար 600 դրամ, ՀՀ Ազգային ժողովի նախագահինը՝ 2 միլիոն 381 հազար 40 դրամ, իսկ փոխվարչապետի աշխատավարձը՝ 2 միլիոն 50 հազար 340 դրամ¹⁴⁹:

Թե որքան են իրականում ՀՀ բարձրագույն իշխանության մարմինների ղեկավարների աշխատանքի վարձատրության իրական մակարդակները, փորձագետի կարծիքով, հայտնի չէ, քանի որ դրա մասին տեղեկատվություն չկա (նախկինում գործում էր «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» հատուկ օրենք, որով սահմանվում էին այդ ղեկավարների աշխատանքի վարձատրության չափերը, սակայն այդ օրենքի գործողությունը դադարեցվել է 2018 թ.): Այդուհանդերձ, վերոհիշյալից ակնհայտ է, որ, ըստ սահմանված իրավակարգավորումների, ՀՀ բարձրագույն իշխանության մարմինների ղեկավարների աշխատանքի վարձատրության մակարդակները նրանց կրած պատասխանատվությանը համահունչ չեն և համեմատելի չեն միջազգային չափանիշներին: Ավելին՝ դրանք չեն համապատասխանում Հայաստանի քաղաքական իշխանության աստիճանակարգմանը, որտեղ իշխանությունը խորհրդարանական է, և երկրի բարձրագույն պաշտոնյան վարչապետն է:

Փորձագետի դիտարկմամբ՝ ՀՀ վարչապետի, նախագահի՝ վերոհիշյալ իրավակարգավորումներով սահմանված աշխատավարձերի մակարդակները շատ ցածր են մասնավոր հատվածի, շատ դեպքերում՝ ՀՀ կենտրոնական բանկի, հարկային ու մաքսային համակարգերի բարձրագույն պաշտոններում պաշտոնավարող անձանց միջին աշխատավարձերից: Փաստորեն, ՀՀ նախագահը, լինելով ՀՀ Սահմանադրության երաշխավորը և ՀՀ վարչապետը, լինելով երկրի փաստացի առաջնորդը, պետական բյուջեից ավելի քիչ աշխատավարձ են ստանում, քան իրենց կողմից նշանակվող և իրենց պատասխանատվության ներքո աշխատող պետական պաշտոնյաները: Այս տրամաբանությամբ է սահմանված նաև ողջ պետական համակարգի աշխատողների աշխատանքի վարձատրության մեխանիզմը: Հետևաբար, այն կարիք ունի կտրուկ փոփոխության՝ չանտեսելով այդ պարագայում պատասխանատվության մեխանիզմների կատարելագործումը: Փորձագետի կարծիքով՝ սովորաբար տնտեսության կտրուկ կրճատման և կանխատեսվող տրևտեսական աճի պայմաններում պետական բյուջեում կհավաքագրվեն այնքան միջոցներ, որոնք կբավարարեն ՀՀ վարչապետի աշխատավարձը սահմանելու 50 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, համապատասխանա-

¹⁴⁹ Համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ նախագահի, Ազգային ժողովի, վարչապետի, Սահմանադրական դատարանի աշխատակազմերում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ամսական աշխատավարձի ֆոնդը հաշվարկվում է բազային աշխատավարձի կրկնապատիկի և այդ աշխատողների թվի արտադրյալով:

բար՝ ՀՀ ԱԺ նախագահին ու նախագահին՝ 15 000, ՀՀ ԱԺ պատգամավորներին, նախարարներին, դատավորներին, դատախազներին՝ 5 000, նախարարների տեղակալներին և այլ համարժեք պաշտոնյաներին՝ 2500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Այս պարագայում պետական ծառայողների միջին աշխատավարձը շուրջ 670 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (250 000 ՀՀ դրամ) սահմանելու դեպքում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների աշխատողների աշխատանքի վարձատրության համար կպահանջվի շուրջ 80 մլրդ դրամ, իսկ շուրջ 820 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (300 000 դրամ) սահմանելու դեպքում՝ 92 մլրդ դրամ:

3. Գետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից կատարված աշխատանքի արդյունավետության գնահատման ինչպիսի՞ մեխանիզմներ են գործում, իսկ եթե չկան, ապա ինչպե՞ս պետք է գնահատել աշխատանքի արդյունքատվությունը: Ի՞նչ խնդիրներ եք տեսնում արդյունավետության կատարողականի գնահատման մեջ:

Վեց փորձագետներից չորսը հիմնականում միակարծիք են, որ արդյունքատվության գնահատման համակարգը թերի է ու կանայական, դրանով հնարավոր չէ միանշանակ գնահատել կատարողականի արդյունավետությունը: Մեկ այլ փորձագետ փաստել է, որ քաղաքացիական ծառայողները տարվա մեջ երկու անգամ պարզևատրում են ստանում՝ կատարողականների գնահատման հիման վրա, այսինքն՝ առնվազն կառավարության որոշման մակարդակով կա կատարողականի գնահատման քաղաքականություն, մեթոդաբանություն: Այլ հարց է, որ այդ որոշման վերանայման անհրաժեշտություն կա, և ընդամենը վերջերս որոշման մեջ կատարվել է փոփոխություն, որը բավականին դրական կարելի է համարել: Տարիներ շարունակ այդ խնդիրը բարձրաձայնվել է այն առումով, որ ղեկավարի և աշխատողների միջև գնահատման հետ կապված ուղիղ փոխկապակցվածություն չպետք է լինի, որի արդյունքում պետական փաստաթղթաշրջանառության մեջ գործող Mulberry համակարգում գործատուն բարձր է գնահատում իր աշխատողին, իսկ ղեկավարի գործակիցը ցածր է լինում: 2022 թ. գործող օրենսդրության մեջ կատարվել են որոշակի փոփոխություններ, և ներկա դրությամբ կա ներդրված գնահատման համակարգ և վերանայում, որը որոշակի չափով իրականացվել է, և որը, ըստ փորձագետի, դրական է:

Սույն խնդրի լուծման առնչությամբ մեկ այլ փորձագետ առաջարկել է հետևյալ լուծումը. կառավարության կամ վարչապետի որոշմամբ սահմանվում է, որ նախարարությունների վարչության պետերը ամիսը մեկ անգամ հանդիպում են իրենց ոլորտներին առնչվող մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ, քանի որ ռազմավարություններ մշակողները վարչության պետերն են: Վարչության պետը պետք է լինի իրազեկված և պետք է տեղեկացնի, թե ինչ ռազմավարություն է մշակվում, իսկ հանդիպակաց կողմը

պետք է տեսնի՝ արդյո՞ք հարկատուների փողերով վարձատրվող պետական պաշտոնյան ճիշտ է աշխատում, ծառայում է հանրության նպատակներին: Պետք է ամրագրվեն նաև այլ կարիքներ: Մա որակական գնահատականն է: Նախարարները և փոխնախարարները պետք է պարբերաբար հանդիպեն ընկերակցությունների (ասոցիացիաների) ղեկավարների հետ:

Կառավարության, պետական մարմինների տրամադրած ծառայությունների որակը, փորձագետի գնահատմամբ, բավարար չէ. հարկատուների վճարած հարկերի դիմաց որակը և արժեքը համապատասխան չեն, հարկատուներն ավելի շատ են վճարում և քիչ ստանում:

Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից կատարված աշխատանքի արդյունավետության գնահատումն իրականացվում է վերոհիշյալ իրավական նորմատիվ ակտերով սահմանված ընթացակարգերով և չափորոշիչներով, սակայն այդ ընթացակարգերը կրում են խիստ հայեցողական մոտեցումներ, որտեղ մեծ է սուբյեկտիվիզմի, դրանից բխող կոռուպցիոն ռիսկերի տարրերի մասնաբաժինը: Նման կարծիք է հայտնել մեկ այլ փորձագետ: Իսկ գնահատման չափորոշիչները օբյեկտիվ, չափելի ու արդիական չեն, չեն արտահայտում հանրային ու քաղաքացիական ծառայություն ստացող անձանց՝ շահառուների, ակնկալիքներն ու սպասումները: Այդ չափորոշիչները մարդակենտրոն չեն, այլ արտահայտում են վերադաս-ստորադաս հարաբերությունները՝ համապատասխան կոռուպցիոն ռիսկերի վտանգներով պայմանավորված: Միաժամանակ, այդ չափորոշիչներում չկա ոչ մի կետ, որով կգնահատվեր համապատասխան անձանց պատասխանատվությունը՝ պաշտոնի անձնագրով սահմանված գործառնությունները թերի կատարելու, կոռուպցիոն ռիսկերի առաջնորդությամբ կատարելու կամ էլ իսպառ չկատարելու առումով:

4. Արդյո՞ք ներկայումս գործող դրամական պարզևատրումների մեխանիզմը տալիս է աշխատողներին իրենց պաշտոնի անձնագրերով նախատեսված գործառնությունների արդյունավետ իրականացումն ապահովելու հնարավորություն: Որքանո՞վ է լուծվում աշխատանքի արդյունավետության խրախուսման խնդիրը:

Բոլոր փորձագետներն էլ նշել են, որ ներկայումս գործող դրամական պարզևատրումների մեխանիզմը աշխատանքի արդյունավետության խրախուսման խնդիրը չի լուծում: Փորձագետներից մեկն ընդգծել է, որ պարզևատրումը կարելի է դիտարկել որպես տարիներ շարունակ չբարձրացված աշխատավարձի չնչին փոխհատուցում, ուստի չի կարելի այն անգամ աշխատավարձի բարձրացում համարել՝ հաշվի առնելով ներկայիս գնաճը: Այն նաև խրախուսման մեխանիզմ չի կարելի համարել, այլ ընդամենը՝ աննշան հավելում աշխատավարձին, որը մի փոքր մեղմում է 9 տարի շարունակ աշխատավարձ չբարձրացնելու հանգամանքը:

Փորձագետներից մեկն էլ նշել է, որ իրականում պարզևատրումն ունի հակակոռուպցիոն նշանակություն, սակայն զուտ արտադրողականության և արդյունավետության բարձրացման տեսանկյունից այն բավարար պայման չէ, քանի որ մեկ ամսում չի գնահատվում պետական աշխատողի արդյունքավորությունը: Կարծիք կա, որ նշյալ ընթացակարգերը խիստ հայեցողական են ու կոռուպցիոն ռիսկերով լի: Նշված իրավակարգավորումների կիրառման վերջին տարիների փորձը ցույց է տվել, որ կանխամտածված կերպով իրականացվել են թաքնված գործողություններ, որոնք ոչ միայն չեն մոտիվացրել աշխատողներին՝ պատշաճորեն կատարելու իրենց պաշտոնի անձնագրերով նախատեսված գործառույթները, այլև չեն նպաստել աշխատանքի արդյունավետության խրախուսմանը, նրանց պարտականությունների չկատարման կամ էլ թերի կատարման դեպքում պատասխանատվության մակարդակի բարձրացմանը: Այսպես՝

- բոլորովին իմաստագրկվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված *պարզևատրում* եզրույթի էությունը, այն է՝ միանվագ վճար, որը պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձին տրվում է ծառայողական գործունեության (կատարողականի) գնահատման և (կամ) հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքների կատարման համար: Փաստորեն, 2018 թվականից ի վեր պետական պաշտոնատար անձանց պարզևավճարները տրվել են առանց հաշվի առնելու կիսամյակային աշխատանքների կատարման հաշվետվությունների գնահատականները՝ կամայական չափով, առանց օրենքով սահմանված սահմանափակումների: Շատ հաճախ պարզևատրումները հայտարարվել են որպես հիմնական աշխատավարձի հավելումներ, լրավճարներ կամ հիմնական աշխատավարձի բաղադրիչներ և հակաօրինական կերպով վճարվել են պաշտոնատար անձանց:
- 2019 թ. նոյեմբերի 14-ին փոփոխություններ է մտցվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թ. դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ, 9-րդ և 10-րդ մասերում: Հատկապես պետք է նշել, որ այդ փոփոխություններով հանվել են պարզևատրմանն ուղղվող միջոցների տոկոսային սահմանափակումները, ինչը նախկինում կազմում էր աշխատավարձի ֆոնդի 30%-ը և պարզևատրման հաճախականությունը, ինչը նախկինում չէր կարող գերազանցել տարեկան 3 անգամը:
- Շարունակվում է պետական կառավարման համակարգի աշխատողներին խրախուսելու փորձը՝ ՀՀ հարկային օրենսգրքում նախատեսելով հիպոթեքային վարկերի տոկոսների սպասարկման համար

եկամտահարկի վերադարձի մեխանիզմը¹⁵⁰, ինչը թույլ է տվել բարձր աշխատավարձ ստացող և բարձր եկամուտ ունեցող անձանց ձեռք բերել թանկարժեք բնակարաններ: Այսպես, ըստ ՀՀ ՊԵԿ տեղեկատվության¹⁵¹ 2015 թ. հունվարից մինչև 2021 թ. հունիս ամիսը ներառյալ այդ կարգավորումից օգտվել է 65059 շահառու, որոնց վերադարձվել է 39.7 մլրդ ՀՀ դրամի եկամտահարկ: Այսինքն, այդ տարիների ընթացքում ՀՀ պետական բյուջեն զրկվել է իրեն խիստ անհրաժեշտ մոտ 40 մլրդ ՀՀ դրամից, որը կարող էր ուղղվել ՀՀ պաշտպանության ուժեղացմանը և հանրային այլ կարիքների բավարարմանը: Հանրային խնդրի լուծման փոխարեն նման կարգավորմամբ հարստացել են ավելի քան 65 հազար շահառուներ, որոնք միաժամանակ ստացել են 300 հազար ՀՀ դրամից բարձր աշխատավարձ, օգտվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ սոցիալական երաշխիքներից: Ընդ որում, խախտելով ՀՀ համապատասխան օրենքը, այդ շահառուներից 759 այդ իրավակարգավորումից օգտվել է մի քանի անգամ: Այսպես, եթե մինչև 2018 թ. հունիս ամիսը այդ իրավակարգավորման շահառուների թիվը կազմում էր 10254 կամ նշված ժամանակաշրջանի շահառուների սոսկ 15.8%-ը, ապա արդեն հետհեղափոխական ժամանակաշրջանում՝ 84.2%-ը: Ավելին՝ 2022 թ. պետական բյուջեում նախատեսված է, որ հիպոթեքային վարկերի սպասարկման համար վերադարձվելիք եկամտահարկի ծավալը պետք է հասցվի 38.0 մլրդ ՀՀ դրամի, ինչը կկազմի հարկային եկամուտների 0.22%-ը, հարկային ծախսերի 7.6%-ը և ՀՆԱ-ի 0.05%-ը:

- 2020 թ. հունվարի 1-ից ներդրվել է եկամտահարկի համահարթ տարբերակը, որով խաթարվել է եկամտահարկի տնտեսագիտական բովանդակության սկզբունքներից մեկը՝ պրոգրեսիվությունը: Ավելին՝ այդ կարգավորմամբ խախտվել են ՀՀ Սահմանադրությամբ հռչակված սոցիալական պետության և հավասարության սկզբունքների կենսագործումը, ՀՀ քաղաքացիների միջև եկամտային հարկի բեռի հավասար բաշխումը, ՀՀ հարկային օրենսգրքի հայեցակարգով սահմանված սկզբունքների իրացումը, ՀՀ բյուջեի մուտքերի լրացման լրացուցիչ միջոցների սահմանումը, ՀՀ-ում եկամտային հարկի դրույքաչափերի կիրարկման հարաբերությունների հստակեցումը: Ըստ գնահատականների՝ նման կարգավորման արդյունքում տարեկան պետական բյուջե չի մուտքագրվել ավելի քան 30.0 մլրդ ՀՀ

¹⁵⁰ Տե՛ս ՀՀ հարկային օրենսգիրք, հոդվածներ 159 և 160:

¹⁵¹ Ի պատասխան մեք՝ 14.07.2021 թ. ՀՀ ՊԵԿ նախագահի 1-ին տեղակալին ուղղված նամակի (23.08.2021 թ. թիվ 02/70-3-52191-2021):

դրամ՝ հենց այդ չափով էլ հարստացնելով բարձր եկամուտ ստացող պաշտոնյաներին և անձանց:

- Նույն մեթոդաբանությամբ խիստ խտրական կարգավորումներ են սահմանվել նաև «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցուման մասին» ՀՀ օրենքում, որով նախատեսված դրոշմանիշային վճարը կամ պարտադիր վճարը սահմանադրական չէ, քանի որ դրա դրույքաչափը աճողական պրոգրեսիվ չէ, հավասարապես չի կիրառվում օրենքով նախատեսված բոլոր ֆիզիկական անձանց նկատմամբ՝ անկախ նրանց եկամտային կամ որ նույնն է՝ գույքային վիճակից: Նշվածը կարելի է որակել պարզապես անհավասարություն և խտրականություն: Նշված կարգավորումը նույնպես ուղղված է բարձր եկամուտ ստացող անձանց ավելի ցածր դրույքաչափով հարկմանը, ինչը հանգեցնում է նրանց տնօրինվող եկամուտների աճին, հետևաբար և հարստացմանը:

5. Հայաստանի վերափոխման՝ մինչև 2050 թ. ռազմավարությամբ¹⁵² նախատեսվում է՝

- 1) ստեղծել 1 500 000 աշխատատեղ,**
- 2) հաղթահարել աղքատությունը աշխատանքով,**
- 3) 20-ապատկել Հայաստանի համախառն ներքին արդյունքը,**
- 4) յոթնապատկել միջին աշխատավարձը:**

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», ինչպես նաև «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքներով նախատեսված աշխատավարձերի կարգավորման մեխանիզմները որքանո՞վ են համահունչ վերոնշյալ երկարաժամկետ թիրախավորումներին: Կամ արդյո՞ք այն՝ 1. կնպաստի, 2. չի նպաստի և 3. չեզոք կլինի մինչև 2050 թ. ռազմավարությամբ նախատեսված թիրախներին հասնելու գործում: Խնդրում ենք 3 տարբերակներից որևէ մեկի ընտրությունը հիմնավորել կամ տալ Ձեր մեկնաբանությունը:

Փորձագետները միասնաբար նշել են, որ աշխատավարձերի կարգավորման գործող մեխանիզմներով վերոնշյալ երկարաժամկետ թիրախներին հասնել հնարավոր չէ: Փորձագետներից մեկի կարծիքով՝ ժամանակակից հարավոփոխ աշխարհում երկարաժամկետ կանխատեսում կատարելը զուտ բարի ցանկություն է: Մեկ այլ փորձագետի դիտարկմամբ՝ մինչև 2050 թ. ռազմավարությամբ նախատեսված թիրախներն ունեն վերանայման և ավելի հստակեցման կարիք, քանի որ պարզ չէ, թե միջին աշխատավարձի յոթնապատկում ասելով ո՞ր հանրապետական միջինը, մարգերի՞, թե՛ Երևանի միջին աշխատավարձը նկատի ունեն: Դրանք միանգամայն տարբեր թվեր

¹⁵² Աղբյուրը՝ https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf

են, տարբեր եկամտաբերություն, արտադրողականություն են ենթադրում, ինչպես նաև գործատուի այլ մոտեցում: 1,500,000 աշխատատեղ ստեղծելը 30 տարվա ընթացքում կնշանակի տարեկան 50,000 աշխատատեղ և պարզ չէ՝ մասնավոր, թե՛ պետական ոլորտներում են դրանք ստեղծվելու:

Հաջորդ փորձագետը նախ հարկ է համարել նշել, որ Հայաստանի վերափոխման՝ մինչև 2050 թ. ռազմավարությունը ՀՀ օրենսդրության մաս չէ և դրանում նախատեսված ցուցանիշների մեկնաբանություններն իրավական հետևանքներ չեն կարող ունենալ: Այդ ռազմավարությունը քաղաքական փաստաթուղթ է, ուստի գործող իշխանությունները չեն կարող պատասխանատվություն կրել: Վերոհիշյալի կապակցությամբ նշվել է, որ ներկայումս Հայաստանը չունի որևէ համապարփակ հեռանկարային ռազմավարական ծրագիր, որով պետք է առաջնորդվեն իշխանությունները: Թեև ՀՀ Կառավարության պաշտոնական կայքում նշվում է, որ գործում է ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային ռազմավարական ծրագիրը, այդուհանդերձ դա հնացած է և համահունչ չէ ինչպես ներկայիս քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական իրավիճակին:

Հայաստանի վերափոխման՝ մինչև 2050 թ. ռազմավարությամբ նախատեսված արդյունքային ցուցանիշները, ըստ փորձագետի, որևէ կերպ հիմնավորված չեն համապատասխան գործողությունների ծրագրերով, անիրատեսական ու ոչ օբյեկտիվ են և անհամադրելի: Ավելին, դրանց կենսագործմանը չեն կարող նպաստել ներկայումս գործող օրենսդրական ակտերն ու բազմաթիվ ոլորտային կարճաժամկետ ու միջնաժամկետ ծրագրերը: Վերոհիշյալի համատեքստում փորձագետը դիտարկել ու քննարկել է ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)¹⁵³: Այսպես.

1) Ծրագրի «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» 4.6 բաժնում նշված է. «Աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվելու է ոլորտի առկա խնդիրներին համալիր արձագանքող ռազմավարական փաստաթղթի հիման վրա»: ՀՀ Կառավարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջերում կատարված որոնումը ցույց է տվել, որ առ այսօր այդպիսի փաստաթուղթ չի մշակվել և չի գործում,

2) Ծրագրի նույն մասում նշված է. «Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու մինչև 2026 թվականը.

- նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը հավասարեցնել, համապատասխանաբար՝ պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին,
- նվազագույն աշխատավարձը սահմանել 85 000 ՀՀ դրամ,
- վերացնել ծայրահեղ աղքատությունը»:

¹⁵³ <https://www.gov.am/files/docs/4586.pdf>

Նշվել է, որ այդ պարտավորությունները հիմնավորված չեն և չեն համապատասխանում ՀՀ ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակին, ՀՀ մարտահրավերներին ու ՀԶՆ նպատակներին,

3) Ծրագրի «Կոռուպցիայի դեմ պայքար» 5.5 բաժնում նշված է. «Վարչական կոռուպցիայի հաղթահարման գործում Կառավարությունը կարևորում է ռիսկերի և կարիքների վրա հիմնված քաղաքականության մշակումը: Ըստ այդմ, Կառավարությունը մտադիր է պետական և տեղական մակարդակում իրականացնել կոռուպցիոն ռիսկերի համապարփակ գնահատում և դրա հիման վրա մշակել միջոցառումների ծրագրեր: Հանրային ծառայության ոլորտում նվազագույնի կհասցվեն կոռուպցիոն ռիսկերը: Իրականացված ծրագրերի արդյունավետությունը գնահատելու և ըստ այդմ ապացուցահենք հակակոռուպցիոն քաղաքականություն ունենալու նպատակով զարգացվելու են հակակոռուպցիոն ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմները»: Ինչպես վկայում են պաշտոնական, ԶԼՄ-ների ու մասնագիտական կառույցների հաղորդումներն ու հետազոտությունները, երկրում դեռևս հաղթահարված չեն կոռուպցիոն ռիսկերը, այսպես. օրենսդրական կարգավորումները և գործող ծրագրերը ոչ միայն չեն խթանում կոռուպցիայի դեմ պայքարը, այլև կրում են բացահայտ օրենսդրական կարգավորման բնույթ: Այդ գործում, ըստ էության, շատ ցածր է քաղաքացիական հասարակության հետ համագործակցության մակարդակը:

4) Ծրագրի «Ռազմավարական պլանավորում և քաղաքականությունների մշակում» 6.1 բաժնում նշված են ռազմավարական պլանավորմանն ուղղված մի շարք նպատակադրումներ, սակայն, ցավոք, անցած մեկ տարվա փորձը ցույց է տալիս, որ այդ ուղղությամբ դեռևս պատշաճ և տեսանելի քայլեր չեն կատարվել: Մասնավորապես, ինչպես նշվեց նախորդ կետերում, առ այսօր երկիրը չունի հեռանկարային համապարփակ ռազմավարական ծրագիր: Իսկ ահա ոլորտային ռազմավարությունները շատ հաճախ հակասական են, միմյանց կապակցված ու համակարգված չեն, ավելին՝ չեն բխում գործող իշխանության մինչև 2050 թ. ռազմավարությունից:

5) Ծրագրի «Պետության կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները» 6.2 բաժնում նշված են հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանն ուղղված նպատակադրումներ, որոնք թույլ կտան դրանք դարձնել քաղաքացիակենտրոն և արդիական, առաջադեմ տեխնոլոգիական հիմքով՝ նպատակ ունենալով թեթևացնել քաղաքացիների և գործարար հատվածի անհարկի բեռն ու քաշքշուկը պետության հետ հարաբերություններում: Սակայն, անցած ժամանակաշրջանի փորձը ցույց է տալիս, որ այդ ծառայությունների մատուցումը ցածրորակ է, դրանք ստանալիս ՀՀ քաղաքացիները բախվում են բազմաթիվ բյուրոկրատական քաշքշուկների. տարածված են թաքուն կոռուպցիոն ռիսկեր, խիստ անբավարար

է ՀՀ քաղաքացիների բողոքների հիման վրա վարչարարության մակարդակը և դրան հետևող արդարադատությունը:

6) Սույն փորձագիտական հարցման համատեքստում խիստ հետաքրքրական են Ծրագրի «Հանրային ծառայության համակարգ և մարդկային ռեսուրսների կառավարում» 6.3. բաժնում նախատեսված նպատակադրումները: Դրանցով ակնկալվում է, որ կառավարությունը նախաձեռնելու է հետևյալ քայլերը.

- վերանայվելու և արդիականացվելու է հանրային ծառայության համակարգը՝ ապահովելով միասնական հորիզոնական համակարգ, մասնավորապես՝ պետական համակարգում աշխատողների կարգավիճակը սահմանող, պաշտոնների դասակարգման, աշխատանքի ընդունման ու ազատման, կատարողականի գնահատման, վերապատրաստումների, աշխատանքի կազմակերպման և այլ հարաբերությունները կարգավորող միասնական օրենսդրություն,
- հանրային ծառայության համակարգում ձևավորվելու է ավագ գործադիր կորպուսը՝ որպես հանրային ծառայության բարձրագույն մակարդակի կառավարման պաշտոններ զբաղեցնող արհեստավարժ ծառայողների խումբ, որի կազմում ընդգրկված քաղաքացիական ծառայողները մրցակցային հիմունքներով կարող են զբաղեցնել այնպիսի պաշտոններ, որոնց գործառույթները ներառում են քաղաքականությունների մշակումը և իրականացումը, խորհրդատվությունը, օպերատիվ կառավարումը, հավաքական ծառայությունների մատուցումը և այլն,
- առանցքային բարեփոխումներ են իրականացվելու հանրային ծառայության գրավչությունը բարձրացնելու ուղղությամբ՝ ներառյալ վարձատրության ու պարգևատրման համակարգերի վերանայումը, հորիզոնական շարժունության ապահովումը, գրավչությունը մեծացնող աշխատանքային միջավայրի ձևավորումն ու պայմանների ներդրումը,
- պետական ծառայության համակարգում լիարժեք ներդրվելու է վարձատրության արժանապատիվ համակարգ՝ միաժամանակ հենվելով պատասխանատվության ծավալի ու կոմպետենցիաների հետ համարժեքության, ինչպես նաև ոչ պետական հատվածի հետ մրցունակության ապահովման կանխադրույթների վրա: Վարձատրության բարեփոխումը, այնուամենայնիվ, պետք է նաև զուգորդի կամ հաջորդի պետական համակարգում ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ դաշտի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներին և առնվազն բարեփոխումների առաջին փուլում պետության համար չառաջացնի լրացուցիչ ֆինանսական բեռ,

- արդիականացվելու է կատարողականի գնահատման համակարգը, և պարզևատրման ու խրախուսման ինստիտուտը հենվելու է արժանիքահենք սկզբունքների վրա, պարզևատրումները պետք է զատվեն վարձատրությունից,
- արմատապես վերանայվելու է պետական ծառայողների կրթության, ուսուցման ու վերապատրաստման գործող համակարգը, ներդրվելու են տեխնոլոգիական առաջադեմ լուծումներով ուսուցման հնարավորություններ, վերանայվելու է կարողությունների ու գիտելիքի զարգացման քաղաքականությունը՝ մարդկային կապիտալի զարգացման, պետական հատվածում տաղանդների ներգրավման ու պահպանման նպատակով,
- սպահովվելու են պետական հատվածում անձնակազմի հավաքագրման ճկուն համակարգեր՝ բարձր պրոֆեսիոնալ ներուժի և տաղանդներ ներգրավելու համար, այդ թվում՝ ակտիվացնելով ջանքերը սփյուռքի ներուժի ներգրավման ուղղությամբ:

Հիմնականում համամիտ լինելով նշված նպատակադրումների հետ՝ այդուհանդերձ փորձագետը նշել է, որ՝

- գործող կառավարության գործունեության նախընթաց ու ներկա փորձը առայժմ համահունչ չեն Ծրագրով նախատեսված հանրային ծառայողների աշխատողների վարձատրության ու պարզևատրման բարեփոխումների նպատակադրումներին, գործող օրենսդրական կարգավորումները պետության համար առաջացնում են լրացուցիչ չհիմնավորված ֆինանսական բեռ, ավելորդ բյուջետային կորուստներ, կոռուպցիոն ռիսկեր,
- նախատեսված նպատակադրումներում խոսք անգամ չկա հանրային ծառայողների թերացումների ու բյուջեին հասցվող վնասների համար համապատասխան օրենսդրական իրավակարգավորումները բարեփոխելու և պատասխանատվության, այդ թվում՝ վարչական, նյութական ու քրեական, խիստ մեխանիզմներ սահմանելու մասին,
- խրախուսման ինստիտուտն առայժմ արժանիքահենք սկզբունքների վրա չէ հիմնված, պարզևատրումները դեռևս չեն զատվել վարձատրությունից, դրանք կապակցված չեն աշխատանքի արդյունավետության և հանրային ծառայությունների մատուցման որակի ու դրանց անբավարար կատարման պատասխանատվության հետ:

6. Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսվում է վերանայել աշխատավարձի գործող համակարգը և ներդնել կատարողականի և արդյունքի վրա հենված գնահատման համակարգ: Որո՞նք են սույն նպատակից բխող խնդիրները գործող իրավակարգավորումներում: Արդյո՞ք գործող իրավակարգավորումները
1. կնպաստեն, 2. չեն նպաստի և 3. չեզոք կլինեն Հանրային կառավար-

ման բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված լուծումներն ապահովելու գործում: Խնդրում են հիմնավորել 3 տարբերակներից որևէ մեկի ընտրությունը:

Բոլոր փորձագետների դիտարկմամբ՝ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված աշխատավարձի գործող համակարգի վերանայումը, կատարողականի և արդյունքի վրա հենված գնահատման համակարգի ներդրումը կարևոր, առանցքային և անհրաժեշտ փոփոխություն է: Փորձագետների կարծիքով՝ գործող իրավակարգավորումները բավարար չեն Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված լուծումներն ապահովելու համար: Նշվել է նաև, որ առնվազն որպես մոդել կատարողականի և արդյունքի վրա հենված գնահատման համակարգի ներդրումը դրական էֆեկտ կունենա:

Փորձագետներից մեկը հատկապես պարզաբանել է, որ ներկա կարգավորումներից որևէ մեկը չի կարող նպաստել Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությամբ (այսուհետ՝ Ռազմավարություն) նախատեսված աշխատավարձի գործող համակարգի վերանայման նպատակադրումների իրականացմանը, կատարողականի և արդյունքի վրա հենված գնահատման համակարգի ներդրմանը: Ըստ էության, հիմնականում Ռազմավարությամբ նախատեսված նպատակադրումներն իրատեսական են, գտնվում են փոխադարձ տրամաբանական կապի մեջ և հաջող կենսագործման պարագայում կարող են հանգեցնել դրական արդյունքների: Այդուհանդերձ, ըստ նրա.

- դրանում նախատեսված արդյունքային ցուցանիշները դժվար չափելի են,
- նախատեսված նպատակադրումներում խոսք անգամ չկա հանրային ծառայողների թերացումների ու բյուջեին հասցվող վնասների դեպքում համապատասխան օրենսդրական իրավակարգավորումները բարեփոխելու և պատասխանատվության (այդ թվում՝ վարչական, նյութական ու քրեական) խիստ մեխանիզմներ սահմանելու մասին,
- խրախուսման արժանիքահենք սկզբունքների իրացման միջոցառումները կապակցված չեն աշխատանքի արդյունավետության և հանրային ծառայությունների մատուցման որակի ու դրանց անբավարար կատարման պատասխանատվության հետ,
- սա այսօր որևէ քայլ չի կատարվել այդ Ռազմավարության իրականացման ուղղությամբ:

7. Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ կապ պետք է լինի նվազագույն ամսական աշխատավարձի գործող չափի և նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի միջև:

Բոլոր փորձագետները նշել են, որ, ըստ էության, նվազագույն ամսական աշխատավարձի չափի և նվազագույն սպառողական զամբյուղի արժե-

քի միջև պետք է ուղիղ և սերտ կապ լինի, նույնիսկ պետք է նվազագույն աշխատավարձն ավելի բարձր լինի, քան սպառողական զամբյուղը: Նվազագույն ամսական աշխատավարձը առնվազն պետք է ծածկի սպառողական զամբյուղը, և քանի որ սպառողական զամբյուղը հակում ունի շատ կտրուկ բարձրանալու, հետևաբար պետք է նվազագույն աշխատավարձը սահմանվի ավելի բարձր, որովհետև նվազագույն աշխատավարձը անընդհատ վերանայել հնարավոր չէ, իսկ սպառողական զամբյուղը «իր տեղում չի կանգնում»: Հետևաբար, պետք է սահմանել ավելի բարձր նվազագույն աշխատավարձ, քան տվյալ պահի սպառողական զամբյուղն է, նախ՝ սպառողական զամբյուղը «ծածկելու» համար և երկրորդ՝ անհրաժեշտ է մի փոքր էլ տեղ թողնել, որ եթե անգամ սպառողական զամբյուղը մեծանա, հնարավոր լինի նվազագույն աշխատավարձով այն ծածկել:

Մեկ այլ փորձագետի դիտարկմամբ՝ ընդհանրապես Հայաստանում ընտրված է նվազագույն աշխատավարձի ֆիքսված մոդելը, որը վերանայվում է, ընդ որում՝ հաշվարկում տնտեսական բաղադրիչը բացակայում է: Իրականում դրանում առկա է նվազագույն սպառողական զամբյուղի և սոցիալական խնդիրների կարգավորման նպատակը: Տնտեսական բաղադրիչը, որը վերաբերում է արտադրողականությանը, ստեղծված արդյունքին և դրա գնահատմանը, ակնհայտորեն բացակայում է, այսինքն՝ նվազագույն աշխատավարձը գուտ սոցիալական կարիքներից և սոցիալական նպատակներից է հաշվարկվում, որը, ըստ փորձագետի, սխալ է, որովհետև տնտեսական և սոցիալական խնդիրները պետք է գտնվեն որոշակի հավասարակշռության վիճակում: Կարող է երբեմն մի նպատակը գերակշռել մյուս նպատակի նկատմամբ, բայց դա պետք է կարճաժամկետ հատվածում լինի: Իրականում, տնտեսական և սոցիալական նպատակները պետք է հավասարակշռում ունենան, որովհետև Հայաստանի պարագայում սոցիալական խնդիրները սուր են՝ ներառյալ բարձր գործազրկությունը, աղքատությունը, նվազագույն զամբյուղից արդեն էական շեղվածությունը և այլն: Ըստ փորձագետի՝ քանի որ ներկայիս թանկացումների պայմաններում նվազագույն զամբյուղը արդեն 68,000 ՀՀ դրամը գերազանցում է, նվազագույն աշխատավարձը 75,000 ՀՀ դրամ դարձնելը էական առաջընթաց չի ապահովելու: Փորձագետը նշում է, որ Հայաստանում նվազագույն զամբյուղն էլ է սխալ հաշվարկված, քանի որ մեր կառավարությունները տարիներ շարունակ և ներկայումս էլ նվազագույն զամբյուղը հաշվարկում են էժան մթերքների հաշվին, որոնք անհրաժեշտ վիտամիններ և կալորիականություն չեն ապահովում:

Մեկ այլ փորձագետ փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրությամբ հռչակվել է ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն: Որպես սոցիալական, իրավական պետության հիմնական բաղադրիչ պետք է առանձնացնել մարդկանց սոցիալական պաշտպանվածության և բարեկեցության համար օրենսդրական երաշխիք-

ների ապահովումը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր աշխատող իրավունք ունի արդար ու գոհացուցիչ վարձատրության, որը կապահովի մարդավայել գոյություն՝ իր և իր ընտանիքի համար և անհրաժեշտության դեպքում կլրացվի սոցիալական ապահովության այլ միջոցներով», իսկ նույն հռչակագրի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար,...»: Նման իրավունք է սահմանված նաև ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով: ՀՀ-ն, միանալով նշված միջազգային փաստաթղթերին, պարտավորվել է միջոցներ ձեռնարկել բնակչության բավարար կենսամակարդակի ապահովման համար: Սակայն, առ այսօր օրենսդրական որևէ ակտով սահմանված չեն «բավարար կենսամակարդակ» հասկացությունը և դրա իրականացման մեխանիզմները:

Սույն հարցի համատեքստում փորձագետներից մեկն էլ նշել է, որ անհրաժեշտ է Հայաստանում բոլոր աշխատող անձանց համար նվազագույն աշխատավարձի և պետական պաշտոն զբաղեցնող անձանց նվազագույն աշխատավարձի, կամ ինչ որ նույնն է՝ բազային աշխատավարձի, մեծությունների մասին գնահատականներն առանձնացնել: Ցանկացած երկրում կոռուպցիայի արմատավորմանն ու տարածմանը մեծապես նպաստում է արդյունք ստեղծող յուրաքանչյուր մարդու աշխատանքի դիմաց ոչ արդարացի ու անօրինական վարձատրությունը, ինչն աշխատողի և նրա ընտանիքի կողմից կենսական կարիքները հոգալու համար ցանկացած միջոցի դիմելու պատճառ է դառնում: Յուրաքանչյուր մարդու արժանապատիվ կենսամակարդակն ապահովող եկամտի հաշվարկման համար ժամանակակից աշխարհում հիմք է ընդունվում գիտականորեն մշակված կենսաապահովման նվազագույն զամբյուղը, որն էլ դառնում է պետական ու ոչ պետական հատվածներում աշխատանքի վարձատրության ու սոցիալական քաղաքականության իրացման հիմքը: Կենսաապահովման նվազագույն զամբյուղը և դրա համարժեք կենսաապահովման բյուջեն երկրի պետական բյուջեի՝ հիմնական ֆինանսական օրենքի ձևավորման հիմքն են, ինչով էլ առաջնորդվում են մասնավոր ոլորտի տնտեսավարողները: Այս կապակցությամբ փորձագետը նշել է, որ ՀՀ Կառավարությունը խախտում է ոչ միայն միջազգային պարտավորությունները, այլև՝ ՀՀ օրենսդրությունը: Այսպես, 2004 թ. մարտին ընդունված «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքում ամրագրված է, որ այդ օրենքը կոչված է կարգավորելու ՀՀ-ում սոցիալական քաղաքականությունը: Դրանում նշված է, որ.

1. կենսապահովման նվազագույն զամբյուղը մարդու առողջության պահպանման և կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ՝ միջազգայնորեն ընդունված ֆիզիոլոգիական, առողջապահական ու սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և հիմնավորված գործակիցներով հաշվարկված ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների կազմն ու կառուցվածքը սահմանող նվազագույն քանակն է,
2. կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի միջոցով հիմնավորվում են սահմանվող նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերը,
3. ՀՀ-ում կենսապահովման նվազագույն բյուջեի մեծությունը նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերի սահմանման հիմքն է,
4. կենսապահովման նվազագույն զամբյուղի կազմն ու կառուցվածքը սահմանվում են օրենքով,
5. ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների, սոցիալական այլ վճարների չափերի և կենսապահովման նվազագույն բյուջեի մեծության միջև համամասնությունները յուրաքանչյուր տարի արտացոլվում են ՀՀ պետական բյուջեի մասին օրենքում:

Փորձագետն արձանագրել է, որ վերոհիշյալ օրենքը ընդունման պահից երբևիցե չի գործել, իսկ դրանում նշված դրույթները, բացառությամբ մեկի, մեր երկրում երբևէ չեն պահպանվել: Այսպես, նշված օրենքին համապատասխան՝ ՀՀ վիճակագրական կոմիտեն (ՀՀ ՎԿ) եռամսյակը մեկ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը պարտաճանաչ հաշվարկում է և հրապարակում իր կայքում: Հաշվարկների համար հիմք են ընդունվում ՀՀ առողջապահության նախարարության կողմից օրական 2412 կկալ սննդի համար անհրաժեշտ նվազագույն պարենային զամբյուղի մեջ մտնող ապրանքների՝ սահմանված սպառման նվազագույն ծավալները: Ավելին, ՀՀ ՎԿ-ն պարբերաբար կատարելագործում է սպառողական բյուջեի հաշվարկման մեթոդաբանությունը՝ հաշվի առնելով ինչպես միջազգային փորձը, այնպես էլ՝ միջազգային ու ազգային փորձագետների կարծիքը: Դրա արդյունքում, սկսած 2011 թ. 2-րդ եռամսյակից, ՀՀ ՎԿ-ն սպառողական զամբյուղը հաշվարկելիս նվազագույն պարենային զամբյուղի արժեքի նկատմամբ սկսեց կիրառել 1,77 գործակիցը՝ մինչ այդ կիրառվող 1,55 գործակիցի փոխարեն, իսկ 2020 թ. 1-ին եռամսյակից՝ 1.85 գործակիցը: Այդուհանդերձ, եթե ՀՀ ՎԿ-ի կողմից հաշվարկված պարենային զամբյուղի արժեքը հիմնականում համապատասխանում է անկախ փորձագետների կողմից հաշվարկված արժեքին,

ապա նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը մոտ 2 անգամ զիջում է անկախ փորձագետների կողմից միջազգային չափանիշներին համահունչ հաշվարկված սպառողական նվազագույն արժեքի մակարդակին: Ըստ 2021 թ. վիճակագրական տարեգրքի տվյալների՝ 2020 թ. տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքում 43.6%-ը բաժին էր ընկել պարենային ապրանքներին, 31.3%-ը՝ ծառայություններին, իսկ 25.1%-ը՝ ոչ պարենային ապրանքներին: Սրա հիման վրա էլ ՀՀ ՎԿ-ն պարենային աղքատության գիծ է սահմանել 23.828 ՀՀ դրամը, աղքատության ստորին գիծ՝ 35.324 ՀՀ դրամը, աղքատության վերին գիծ՝ 53.641 ՀՀ դրամը և աղքատության միջին գիծ՝ 44.482 ՀՀ դրամը: Սակայն, 2020 թվականից հետո էականորեն մեծացել են գնաճային ճնշումները և սպառողական գների ինդեքսը 2020-2022 թթ. կազմել է 15.9%: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ՀՀ ՎԿ-ն 2022 թ. 2-րդ եռամսյակի համար նվազագույն պարենային զամբյուղի արժեքը ամսական կտրվածքով հաշվարկել է 44.431.3 ՀՀ դրամի չափով, իսկ նվազագույն ամսական սպառողական զամբյուղի արժեքը՝ 82.198 ՀՀ դրամի չափով: Ըստ փորձագետի գնահատականների՝ այդ մեծությունները համապատասխանաբար կազմում են 44.431.3 և 133.3294 ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ, նշվել է՝ միջազգային չափանիշներով սահմանված է, որ ապահով է համարվում այն մարդը, որի եկամուտների մինչև 25%-ն է ծախսվում սննդի վրա: Այդ չափը գերազանցելու դեպքում մարդու կյանքի որակն ու կենսամակարդակը ընկնում են: Զարգացած եվրոպական երկրներում բնակչությունը միջին չափով իր սննդի վրա ծախսում է իր եկամտի 20%-ը, սկանդինավյան երկրներում՝ 8-10%-ը, ԱՄՆ-ում՝ 1%-ը: Իսկ ահա Հայաստանում քաղաքացին, փաստորեն, սննդի վրա ծախսում է իր եկամտի մոտ 44%-ը: Եվ դա հիմք է ընդունվում ամեն տարի բյուջեի ու տնտեսական զարգացման ծրագրերի հաստատման ժամանակ: Ահա դրա արդյունքում է, որ մենք չենք կարողանում դուրս գալ աղքատության և կոռուպցիայի ճիրաններից:

Հիմք ընդունելով վերոհիշյալ փորձագիտական գնահատականները և միջազգային չափորոշիչը, ըստ փորձագետի, ՀՀ-ում կենսաապահովման նվազագույն բյուջեի չափը 130 000 ՀՀ դրամ է: Ահա այն նվազագույն չափը, ըստ որի՝ ՀՀ քաղաքացին կարող է համարվել ապահովված և վարել արժանապատիվ կյանք: Ուստի անհրաժեշտ է իրականացնել այնպիսի սոցիալական քաղաքականություն, որի հիման վրա կձևավորվեն արտադրողական, արդյունավետ, ստեղծագործ աշխատանքի վարձատրության մեխանիզմները, ինչը հանրային ծառայողներին զերծ կպահի կոռուպցիայի ախտով գայթակղվելուց: Կենսաապահովման այսպիսի նվազագույն բյուջեին համարժեք էլ պետք է սահմանվի ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու նվազագույն ամսական աշխատավարձը՝ 130.000 ՀՀ դրամ, դրան համապատասխան էլ ՀՀ քաղաքացիական ծառայողի բազային աշխատավարձը պետք է սահմանվի

104.000-156.000 ՀՀ դրամի չափով: Այդ դեպքում նրանց միջին աշխատավարձը կարող է կազմել 300.000-350.000 ՀՀ դրամ: Այդպիսի միջին աշխատավարձը հնարավորություն կտա ՀՀ քաղաքացիական ծառայողին ոչ միայն ապահովելու իր պարենային նվազագույն և կենսապահովման նվազագույն կարիքները, այլև կատարելու զգալի խնայողություններ: Նման մակարդակով սահմանված միջին աշխատավարձը հնարավորություն կտա ՀՀ քաղաքացիական ծառայողին ոչ միայն ապահովելու իր ընտանիքի (հիմք ընդունելով այն փաստը, որ ՀՀ-ում 1 ընտանիքի միջին չափը կազմում է 4 մարդ) պարենային նվազագույն գամբյուղի նվազագույն պահանջը, այլև իր ընտանիքի անդամների սոցիալ-կենցաղային ու մշակութային այլ պահանջների մեծ մասը: Ներկայումս քաղաքացիական ծառայողը կարողանում է իր ընտանիքի կենսապահովման՝ միջազգային չափանիշներին համարժեք բյուջեն հոգալ սոսկ 35%-ի չափով: Ահա այն մոտիվացիան, ինչը յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի մղում է մտածելու իրեն վերապահված լիազորությունները կոռուպցիոն դաշտում իրագործելու մասին: Կենսապահովման միջազգային չափանիշներին համարժեք առաջարկվող բյուջեն առավել նպաստավոր ու արդյունավետ կլինի այն դեպքում, երբ ընտանիքում զբաղված լինի առնվազն 2 անձ:

Վերոհիշյալի համատեքստում բացասական լույսի ներքո են դիտարկվում հետևյալ փաստերը.

- աշխատավարձի նվազագույն չափը 2016-2019 թթ. ընթացքում սահմանվել է 55.000 ՀՀ դրամ և բարձրացվել միայն 2020 թ.՝ կազմելով 68.000 ՀՀ դրամ, ինչը փորձագետի կողմից հաշվարկված սպառողական նվազագույն գամբյուղի 51.1%-ն է,
- կենսաթոշակի նվազագույն չափը 2016-2020 թթ. եղել է 16.000 ՀՀ դրամ և բարձրացվել է միայն 2021 թ.՝ կազմելով 28.600 ՀՀ դրամ, որը հավասար է պարենային գամբյուղի 64.6%-ին և սպառողական նվազագույն գամբյուղի 22.0%-ին,
- 2014 թ. պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը եղել է 40.000 ՀՀ դրամ, 2015-ին այն բարձրացվել է, կազմել է 66.140 ՀՀ դրամ ու ընդհուպ մինչ 2022 թ. պահպանվել է այդ մակարդակի վրա, և այդ այն դեպքում, երբ 2015-2022 թթ. ընթացքում սպառողական գների ինդեքսը 125.9% էր, այսինքն՝ սպառողական գները բարձրացել են ավելի քան քառորդ մասով,
- պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը ներկայում կազմում է ընթացիկ գներով հաշվարկված սպառողական նվազագույն գամբյուղի սոսկ 50.9%-ը,

- ՀՀ Կառավարության ծրագրով նախատեսվում է, որ նվազագույն աշխատավարձը 2026 թ. կսահմանվի 85.000 ՀՀ դրամի չափով, ինչը կկազմի ընթացիկ տարվա գներով հաշվարկված սպառողական նվազագույն զամբյուղի 65.3%-ը:

Փորձագետը կարծում է, որ նման իրավիճակը հետևանք է այն իրողության, որ.

- նվազագույն սպառողական զամբյուղի հաշվարկման մեթոդաբանությունը թերի է,
- ի հակադրության ՀՀ օրենսդրության՝ սպառողական զամբյուղի հաշվարկված մեծությունները չեն ամրագրվում պետական բյուջեում և հիմք չեն ընդունվում աշխատավարձի և սոցիալական քաղաքականությունների իրականացման ժամանակ,
- նվազագույն աշխատավարձի սահմանումը մեթոդապես սխալ է և չի համապատասխանեցվում սպառողական նվազագույն զամբյուղի հաշվարկված մեծությանը, ինչը ներկայումս առնվազն պետք է համապատասխաներ պարենային զամբյուղի արժեքին՝ 130.000 ՀՀ դրամի չափով,
- կենսաթոշակի նվազագույն չափի սահմանումը մեթոդապես սխալ է և չի համապատասխանեցվում սպառողական նվազագույն զամբյուղի հաշվարկված մեծությանը, ինչն առնվազն պետք է համապատասխանի պարենային զամբյուղի արժեքին՝ 44.400 ՀՀ դրամի չափով,
- բազային աշխատավարձի համակարգային բարձրացում վերջին տարիներին տեղի չի ունեցել, ինչը փորձ է արվում որոշակիորեն փոխհատուցել պարզևատրումների կամ լրացուցիչ աշխատավարձի միջոցով,
- պետական և մասնավոր հատվածների աշխատաշուկայի վերլուծության պարբերականությունը մեծ է՝ 3 տարի,
- մեծ է պետական և մասնավոր հատվածների աշխատավարձերի միջև խզվածքը (ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2021 թ. նոյեմբերին պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձը ոչ պետական ինստիտուցիոնալ հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձի 81.9%-ն է),
- վարձատրության ամբողջական ու մանրամասն տեղեկատվությունը հասանելի չէ,
- առերևույթ խախտված են վարձատրության համակարգի որոշ՝ օրենքով սահմանված սկզբունքներ. պետական պաշտոն և այլ պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների համակարգը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի և՛ ըստ պատասխանատվության ու իրավասությունների տարբեր պաշտոնների վարձատրության համարժեքության, և՛ պաշտոնային խմբի

ներսում տարբեր մակարդակներին վերագրված գործակիցների հեռավորության մասով,

- վարչական ու հայեցողական պաշտոնյաներին նշանակված գործակիցներն առնվազն հարցեր են առաջացնում. նկատելի չեն պատասխանատվության ու իրավասության հետ տրամաբանորեն կապակցված օրինաչափությունները,
- աշխատավարձի համակարգը չի խրախուսում պետական ծառայողների՝ ավելի բարձր պաշտոն զբաղեցնելու ձգտումը, համարժեք չեն առաջխաղացման դեպքում աշխատավարձի գործակցային աճը և պատասխանատվության, իրավասությունների ու կոմպետենցիաների ծավալի աճը,
- հանրային ծառայողների պարգևատրումը որպես աշխատավարձի հավելում է դիտարկվում, ավելին՝ աշխատողների խրախուսման առկա մոտեցումների հետևանքով անհավասար պայմաններ և անարդարության միջավայր է ձևավորվում, պարգևատրումները կապված չեն կատարողականի հետ, գերիշխում են հայեցողական մոտեցումները,
- պարգևատրումների հայեցողական մոտեցումների հետևանքով ձևավորվում է աշխատավարձի գենդերային խզվածք:

8. Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ կապ և հարաբերակցություն պետք է լինի միջին և նվազագույն աշխատավարձի միջև: Օրինակ, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով նախատեսված է առավելագույնը 60%, միջինը 50%, իսկ նվազագույնը 40%¹⁵⁴:

Բոլոր փորձագետները նշել են, որ հենց նշված տոկոսային միջակայքն է ընդունելի և ավելացրել, որ առնվազն 40%-ը և առավելագույնը 60%-ը շատ տրամաբանական համամասնություն է, որովհետև նախ պետք է կարևորվի միջին աշխատավարձը և դրա բարձրացումը, այսինքն՝ նվազագույն աշխատավարձի բարձրացումը ինքնանպատակ չպետք է լինի: Միջին աշխատավարձը աշխատուժի նկատմամբ առաջարկ-պահանջարկ հարաբերակցության մեջ շուկայում թելադրող է, որովհետև աշխատուժի գինը աշխատավարձն է, և հետևաբար, եթե օրինակ, օրենքով կարող ենք սահմանել նվազագույն աշխատավարձը, ապա միջին աշխատավարձը սահմանել չենք կարող: Դա շուկան է սահմանում, հետևաբար որքան բարձրանում է միջին աշխատավարձը, այնքան դա վկայում է այն մասին, որ նախ՝ շուկայում կա որակյալ աշխատուժ, և երկրորդ՝ աշխատողների կողմից կա թելադրվող պահանջարկ, հետևաբար դրա հաշվին բարձրանում է նաև աշխատավարձը:

